

**ՓԵՏՐՈՒԱՐ**

**Ա. – Կիրակի**

**ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ**

- **Նիւթ՝ Մանուկ Քրիստոսի Լոյսով լուսաւորուիլ**

Աւետարանի հատուածներ (Ղեւտացիս 12:1-8, Եսայի 9:2, 42:6, 49: 6, Ղուկաս 2:22-52, Եսայի 24:21-23, 25:1-8, Գործք. 7:47-50, Գաղատացիս 4:1-7):

- **Տէրունական աղօթք «Հայր Մեր», եւ «Բարձրեալ Քրիստոսը մեզի ապաւէն ընենք, որպէսզի որեւէ չարիք չհասնի՝ մեզի, եւ որեւէ փորձանք չմօտենա՛յ մեր յարկերուն»:**

- **Սաղմոսի ընթերցում/ ուսուցում [10 վայրկեան] Սաղմոս 37:8-15**

- Զսպէ՛ բարկութիւնդ, մէկ կողմ դիր գայ-րոյթդ. սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես:

= Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին, մինչդեռ Տիրոջ վստահողները երկիրը պիտի ժառանգեն:

- Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ա՛լ գոյու-թիւն պիտի չունենայ որքան ալ փնտռես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես:

= Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը, եւ կատարեալ խաղաղութիւն պիտի վայելեն:

- Ամբարիշտը արդարին դէմ դաւ կը նիւթէ՝ անոր դէմ իր ակռաները կը ճտելով:

= Տէրը կը ծիծաղի անոր վրայ, որովհետեւ գիտէ թէ մօտ է անոր կորուստին օրը:

- Ամբարիշտները իրենց սուրերը կը քաշեն, իրենց աղեղները կը լարեն՝ նետահարելու համար աղքատն ու չքաւորը, սպաններու հա-մար ուղիղ վարքով ապրողները:

= Սակայն անոնց սուրերը իրենց սիրտը պիտի մխուրդին, աղեղները պիտի կոտորին:

- **Սաղթանք/աղօթք/ոսկեղէն համարի ուսու-ցում [10 վայրկեան]**

«Տէրը իմ լոյս եւ փրկութիւնս է, ես որմէ՞ պիտի վախնամ: Տէրը իմ կեանքիս ապաւէնն է, ես որմէ՞ պիտի դողամ» (Սաղմոս 27:1):

**FEBRUARY**

**1.– Sunday**

**PRESENTATION**

- **Theme: Let us be filled with the light of baby Jesus**

**Biblical Readings: (Leviticus 12:1-8, Isaiah 9: 2, 42:6, 49:6, Luke 2:22-52, Isaiah 24:21-23, 25:1-8, Acts 7:47-50, Galatians 4:1-7).**

- **Lord’s Prayer then a Prayer of Supplication:**  
*“Let us make Christ, the Exalted, our refuge, that evildoers may not reach us, nor torments approach our dwellings.”*

- **Reading/teaching of Psalms [10 minutes]**  
 Psalm 37:8-15

- Don’t give in to worry or anger; it only leads to trouble.

= Those who trust in the Lord will possess the land, but the wicked will be driven out.

- Soon the wicked will disappear; you may look for them, but you won’t find them;

= But the humble will possess the land and enjoy prosperity and peace.

- The wicked man plots against the good man and glares at him with hate.

= But the Lord laughs at wicked men, because he knows they will soon be destroyed.

- The wicked draw their swords and bend their bows to kill the poor and needy, to slaughter those who do what is right;

= But they will be killed by their own swords, and their bows will be smashed.

- **Teaching of Prayer/ biblical verses**  
 [10 minutes]

*“The Lord is my light and my salvation; I will fear no one. The Lord protects me from all danger; I will never be afraid” (Psalm 27:1).*

*“Now, Lord, you have kept your promise, and you may let your servant go in peace.*

«Այժմ, ո՛վ Տէր, համաձայն քու խոստումիդ՝ ձգէ՛ որ ծառադ խաղաղութեամբ մեննի՝ որովհետեւ աչքերովս տեսայ Փրկիչը, որ զրկեցիր բոլոր ժողովուրդներուն, որպէս լոյս՝ հեթանոսները լուսաւորելու» (Ղուկաս 2:29-32):

«Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհաննէս 3:16):

- **Շարականի ուսուցում** [10 վայրկեան]

### **Շարական Տեառնընդառաջի Օրհնութիւն ԱԶ**

«Մարմնացեալդ ի կուսէ՛ն նախայաւիտեա՛ն բանդ, այսօր ի տաճա՛րն ե՛կի՛ր կատարել զօրէնս վասըն փրկուլթեա՛ն հեթանոսա՛ց:

Որ յանարուեստ աթոռ նրստիս բարբառնեալդ ի հրեշտակաց. այսօր ի Սիմէոնի՛ բառնարով ի գիրկս, որ ընծայեսցես ըզմեզ ի կեանսրդ յաւիտենի՛ց:

Որ արձակիչդ ես կապելո՛ց պարգեւատու ամենեցուն. այսօր հայցմա՛մբ ծերունու՛յն արձակեա եւ գիս ըզբազմամեղս ի կապանաց մահու ի՛ կեանսրդ յաւիտենի՛ց»:

### **Մեծացուցէ ԴԶ**

«Աթոռ քրովբէական երեւեալ այսօր Սիմէոնն. գաստուածորդին ի գիրկըս իւր բարձեալ մարմնով, զո՛ր զօրք երկնից ի բարձունըս հանապա՛ց մեծացուցա՛նե՛մք:

Արտասուելո՛վ աղերսէր, արձակեա գիս ի խաղա՛ղութիւն, անարատ ծրնողի քո բարեխօսութեամբ, զո՛ր զօրք երկնից ի բարձունըս հանապա՛ց մեծացուցա՛նե՛մք»:

- **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**

Սուրբ Աստուած, սուրբ եւ հրօր, սուրբ եւ անմահ,

որ եկիր եւ գալոյց ես ողորմեա մեզ:

(Տեառնընդառաջի, Հոգեգալուստի եւ Վերափոխման)

*With my own eyes I have seen your salvation, which you have prepared in the presence of all peoples:*

*A light to reveal your will to the Gentiles” (Luke 2:29-32).*

*“For God loved the world so much that he gave his only Son, so that everyone who believes in him may not die but have eternal life” (John 3:16).*

- **Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns**  
[10 minutes]

### **Hymn of the Presentation of Christ to the Temple**

*O Christ, Word before infinity, who took flesh from the Holy Virgin, You came to the Temple today to fulfill the law and save the pagans.*

*Provider to all and Liberator of bonds, today by the request of the aged one (Simeon), release me also, a manifold sinner from the bonds of death and deliver me to life everlasting.*

- **Before the Gospel reading students must sing Trisagion “Soorp Asdvadz”**

*Holy God, holy and mighty, holy and immortal,*

*Who didst come and art to come, have mercy upon us.*

(For Presentation, Pentecost and Assumption)

- **It is preferred to read the Gospel of the day. The teacher should explain/ comment on what was read.** [15 minutes]

On this Sunday it is appropriate to speak and explain the nature of God-Christ as sun/light who gives light and life to the entire world.

On this day the old and holy man Simon recognized in the small Jesus the future Savior of mankind. He saw in Him the light of the world.

He knew that through His words and deeds men and women of all ages would see the true light

- **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ [15 վայրկեան]**

- **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն [5 վայրկեան]**

Թելադրելի է որ այս Կիրակի խօսուի եւ բացատրուի Քրիստոսի աստուածային բնութեան մասին իբր արեւ եւ լոյս, որ լոյս ու կեանք կու տայ ամբողջ աշխարհին:

Այսօր Սիմէոն արդար ծերունին մանուկ Յիսուսի մէջ կը տեսնէ ու կը ճանչնայ մարդկութեան ապագայ Փրկիչը: Ան կը գիտնայ, որ բոլոր դարերու մարդիկ Յիսուսի խօսքերուն եւ ուսուցումներուն միջոցաւ պիտի տեսնեն ճշմարիտ լոյսը եւ ընթանան արդարութեան ճամբաներէն եւ ժառանգեն մնայուն խաղաղութիւն եւ երջանկութիւն:

Այսօր Յիսուս որպէս արեւ, լոյսի եւ կեանքի իշխան կը ծանուցուի Սիմէոն ծերունիին միջոցաւ եւ Աստուծոյ կողմէ աշխարհին կ'ընծայուի: Հետեւաբար այսօր նաեւ հայ եկեղեցւոյ մէջ գեղեցիկ աւանդութիւն է, որ մայրեր Տեառնընդառաջի նախօրեակին իրենց մանուկները եկեղեցի բերեն եւ արարողութեան աւարտին քահանային յանձնելով Աստուծոյ ներկայութեան խորան բարձրացնեն՝ օրհնութիւն ստանալու: Արձակման՝ ընտանիքներ խորանէն բերուած մոմէն իրենց մոմերը կամ լապտերները կը վառեն եւ իրենց տուները կը տանին, որպէսզի Քրիստոսի Լոյս ներկայութեամբ իրենց յարկերը օրհնուին:

- **Թելադրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]**
- **Կամաւոր նուէրներու հաւաք**
- **Կիրակնօրեայի քայլերգ**
- **Դասարանային աշխատանք**
- **Փակման/արձակման Աղօթք**

**Դուն կենդանի կրա՛կ, Քրիստոս**

Դուն կենդանի կրա՛կ, Քրիստոս, իմ սրտիս մէջ բորբոքէ՛ քու սիրոյդ կրակը, որ այս աշխարհը ձգեցիր, որպէսզի այրէ հոգիիս աղտերը, սրբէ խղճմտանքս եւ մաքրէ մարմինիս մեղքերը, եւ սրտիս մէջ քու գիտութեանդ լոյսը վառէ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՛ բազմամեղիս:

and find the right ways of life for their happiness. Today Jesus as sun and prince of light and life was recognized, exposed and presented to us. Hence according to an ancient tradition of the Armenian Church, mothers used to bring their newly born children to the church on the eve of the fourteenth of February where the feast is celebrated and they presented them to the parish priest, who in his turn took the children up to the altar and presented them to God for His divine blessing. Armenian families used to take with them a lighted candle from the church by which they put on the light in their own homes, thus symbolizing Christ's presence in the family.

- **Announcements/ recommendations/ suggestions**
- **Collection**
- **Sunday School's anthem**
- **Students depart to their classes**
- **Closing Prayer**

**Christ Living Fire**

Christ, Living Fire, inflame my soul with the fire of Your love, which You sent forth upon the earth, that it may consume the impurities of my soul, cleanse my conscience, purge the sins of my body, and kindle in my heart the light of Your knowledge. Have mercy upon Your creatures, and upon me, great sinner that I am.

## ՏԵԱՌՆՆՆԴԱՌԱԶ



Միմէոն ծերունի, կանգնած Սողոմոնի Երուսաղէմի մէջ կառուցած Տաճարի խունկով օծուն կամարներուն ներքեւ, ու բանալով մարգարէաշունչ, մկանսւր բայց դողացող իր շրթները, մինչ աչքերուն խորքին քարացած ուրախութեան ժպիտով՝ օրհներգութեան եւ *ց ն ծ ու թ ե ա ն աղաղակ դարձած գոհութեան փաղերով կը բարբառի...*

«Հիմա, ով Տէր, քու ծառայ պատրաստ է իր հոգին խաղաղութամբ քու ձեռքերուդ մէջ աւանդելու, որովհետեւ ան այլեւս փեսա քու խոստացած Փրկիչդ»:

Միմէոն ծերունի, ձեռքերուն առած Յիսուս մանուկը ու զԱյն վեր դէպի երկինք բարձրացուցած, երկիւղած խոնարհութամբ կը դաւանի Քրիստոսի Մեսիական *առաքելութիւնը*: Բարձրադաղակ կը յայտարարէ թէ Ան է *Օծեալ Տէրը* եւ աշխարհի *Փրկիչը*:

Քրիստոս՝ մարդկային ցեղի առաջին փայլարը, Աստուածամայր Մարիամի միջոցաւ աշխարհ եկած էր, որպէս Աստուծոյ Միածին Որդին եւ կոչուած էր ըլլալ Քահանայապետ, Փրկիչ եւ Սուրբ: Այդ սրբութեան եւ որդեգրութեան կոչումին արժանանալու, մանաւանդ Ադամական առաջին մեղքը չնջելու համար իւրաքանչիւր ծնողք պարտաւոր էր իր կարողութեան համաձայն Տաճարին իբր փրկագին նուէր փայ: Այսպէս, հարուստներ Տաճար պէտք էր բերէին գառնուկ մը եւ աղանի մը. մին՝ ընծայ գոհասեղանին վրայ այրուելու, միւրը՝ իբր խորհրդանիշ Ադամական մեղքէն սրբուելու: Իսկ աղքատներ, որոնք անկարող էին ոչխար նուիրելու, գոյգ մը աղանի Տաճար կ'ընծայէին: Յիսուսի ծնողքը, ըլլալով համեստ դասակարգէ, բառասնօրեայ Յիսուս մանուկի Տաճար ընծայուելուն առթիւ՝ գոյգ մը աղանի կը նուիրէ:

Ահա նոյն այս պահուն է, երբ քառասնօրեայ ընծայման արարողութիւնը վերջացած, Միմէոն ծերունին, որ երկար փորհներ հոն Տաճարին մէջ մեծ յոյսով կը սպասէր թէ անպայման, նախքան իր աչքերը յաւիտեան փակելը, պիտի տեսնէ Աստուծոյ *Օծեալը*՝ Սուրբ Հոգիէն մղուած յառաջ կ'ընթանայ դէպի Մանուկ

Յիսուսը: Կ'առնէ զԱյն իր գրկին մէջ, ամո՛ւր մը սրբին սեղմելով կը բարձրացնէ աչքերը դէպի երկինք, կ'օրհնէ զԱստուած ու կ'ըսէ. «Հիմա, ով Տէր, քու ծառայ պատրաստ է իր հոգին խաղաղութամբ աւանդելու. որովհետեւ ան այլեւս փեսա քու խոստացած փրկիչդ, որ հեթանոսներուն եւ ամբողջ աշխարհին համար *Լոյս* պիտի ըլլայ»:

Տեառնընդառաջի փօնը կը զուգադիպի նաեւ մեր հեթանոս հայրերու շարքին մէկ փօնին: Այդ Միիր կամ հայոց Արամազդ Արեւի մեծ չաստուծոյ փօնն էր: Յոյներ եւ Հռոմէացիներ եւ ունէին իրենց արեւ աստուածը որ Միիր կամ Միթրա կը կոչուէր: Ան կը մարմնաւորէր *կեանքը*, *լոյսը* եւ *ջերմութիւնը*: Միիր չաստուածը *Սէր* էր ու *խնայ-փութիւն*: Խաւարը յաղթող *ճշմարտութիւն* եւ պաշտպանը *հանդերձեալ* կեանքին: Նաեւ պարսիկներ մեծ կարեւորութիւն կու տային *Միհրական* փօնին: Ըստ Մագղէական կամ գրադաշտական իրենց կրօնին, այդ օր, *սրբեղծագործութեան*, *կեանքի* ու *յարութեան փօնն* էր: Նոյնիսկ արեւի պարկերը պարսիկներ, դրօշակի թէ վահանի վրայ գծած՝ զինանշանի վերածած էին:

Նեթանոս հայեր Միհրական այդ փօնին, որ Արամազդ արեւ չաստուծոյ ծննդեան օրն էր, ամէն փող խարոյկներ կը վառէին ու հանդէսներ կը սարքէին: Հայաստանի նախաքրիստոսեան սկզբնական դարերուն, ինչպէս որ իրենց անդրանիկ գաւակները Սոսես Անուարին կամ այլ չաստուածութիւններու կ'ընծայէին, նոյնպէս ալ այս փօնին իրենց սրբախաբորները կրակէ բոցերուն ներքեւ՝ Արամազդ չաստուծոյ անուանին կը գոհաբերէին: Երբեմն ալ աղանիներու թելերը քարիւղով կ'օծէին ու կրակ փայլով կը թռցնէին: Իրենց փան ճրագը վառելու համար խարոյկի կրակէն բոց մը իրենց հետ փուն կը փանէին: Նաեւ կրակի մնացած մոխիրներէն մաս մը իրենց արքերուն ու դաշտերուն մէջ կը ցանէին, հունձքերու առաւորութեան եւ պողպատեան համար:

Ահա թէ ինչու մինչեւ այս օրերը փակաւին փող-փող հայեր Տեառնընդառաջի օրը խարոյկ կը վառեն ու կրակի վրայէն կը ցարկեն:

Իսկ եկեղեցիներու մէջ Տեառնընդառաջին՝ եկեղեցական արարողութեան ընթացքին, Քրիստոս որպէս կենդանի Արամազդ, *կեանք*, *յարութիւն* եւ *լոյս* փողող *Արեւ*՝ խորանէն՝ որ երկինքը կը խորհրդանշէ, մոմի մը բոցին մէջ խրացած կ'իջնէ երկիր ու մարդոց միջեւ կը *բաշխուի*: Ահա ա՛յս է խորհուրդը եւ նշանակութիւնը Տեառնընդառաջի քրիստոնէական իմաստին: Դէպի մեր Տէրը՝ Փրկիչ Յիսուս Քրիստոսի *ընդ առաջ* երթալը: Ան, որ նոյնիսկ արեւին սրբեղծիչն էր, պարգեւող կենդանութիւնը բոլոր շնչող էակներու՝ մեր մէջ մարմնացաւ ու մարդացաւ, որպէսզի մեզի ցոյց տայ կարարելութեան, կեանքի, ճշմարտութեան, սրբութեան, արդարութեան ու *սիրոյ* ճամբան:

Տեառնընդառաջի քրիստոնէական փարագումին մէջ է որ կարելի կ'ըլլայ ըմբռնել եւ նոյնացնել հայոց հին հեթանոս Արեւ-կրակ-լոյսի աստուածութիւնը քրիստոնէա-



## PRESENTATION OF THE CHILD JESUS TO THE TEMPLE

(Luke 2:25-35, 41-52)

*Christ the King of glory comes this day  
Comes this day to be presented.  
He fulfills the law by His coming on  
the fortieth day .*

Կան անիմանալի *Լոյս-Քրիստոս* Աստուածին, որ փակաւին մանուկ, Տօր Աստուծոյ ներկայութեան որպէս մէկ ամբողջ՝ բերուեցաւ, եւ ի ցոյց մարդկան վերկարար *Լոյս Քրիստոսը* հռչակուեցաւ: Լոյս Աստուծոյ, Լոյս Որդին՝ անսկիզբ որպէս *լոյս* եւ *կեանք* պիտի բաշխուէր առանց սպառելու:

Ահա այդ *լոյսին* Աստուծոյն է որ մեր մանուկները Տեառնորդառաջի նախափօնակին կընծայաբերուին: Իմանալի՜ կրակին, լոյսին մէջէն անիմանալի Աստուծոյ *Լոյսը ողջունելու, ընդունելու եւ ապրեցնելու* Գերագոյն Բարի ԼՈՅՍԸ իրենց մէջ:

Տեառնորդառաջի շարականները եւ փաղերը մէկ կողմէ պանծացումն ու ներբողն են *լոյսի* եւ միւս կողմէ նկարագրութիւնը *Գերագոյն, Անիմանալի* եւ *Անսկիզբ Արեգակ-Քրիստոսի* Քառասնօրեայ Տաճար Գալստեան դէպքին: Այլ խօսքով՝ *Լոյսի քրիստոնէացման հռչակումը: Լոյսին, Արեւին* քրիստոնէանալը, Յիսուսով *մարմնանալը*: «Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան բանդ», «Այսօր հեթանոսաց լոյս ծագեցաւ Քրիստոս Աստուծաւ», «Այսօր աշխարհի ցուցար լոյս, եւ վերկրթիւն փիեզերաց Քրիստոս Աստուծաւ», «Այսօր իմանալի արեգակն, որ ծագեցար փիեզերաց Քրիստոս Աստուծաւ», «Որ ի Տօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ եւ կեանք» (Շարակնոց) :

Ի վերջոյ Տեառնորդառաջը քրիստոնէական իր պարունակին մէջէն վեր ու անդին, հայոց հին-հին հեթանոսական կրօնի եւ ժողովրդային աւանդութեանց նշոյլները փակաւին աղօսք կերպով իր մէջ կը ցուցնէ ու այդ *պէտք է պահել* եւ լայնօրէն *ժողովրդականացնել* որպէս «մասունք մնացորդաց» մեր նախնեաց հաւաքալիքներուն, աշխարհահայեացքին եւ հեռաւոր արձագանգ մեզ անցեալին կապող:

The presentation of the child Jesus to the Temple on the 40<sup>th</sup> day of his birth was an old Jewish custom that Jesus’ parents observed faithfully. When the child Jesus was presented to the Temple as the first-born, something beautiful happened. There was a very old holy man in the temple by the name of Symeon who had begged God not to take his life away before he could see the Savior. Everybody had great respect and veneration for this holy man as a man of God.

When Jesus was brought to the temple he took Him in his arms and said, “Now, Lord, you can dismiss your servant in peace; You have fulfilled Your promise. For my eyes have witnessed Your saving deed, displayed for all the peoples to see; a revealing light to the gentiles, the glory of your people Israel.” This holy man recognized in the small child Jesus the future Savior of all mankind. He saw in Him the light of the world. He knew that through His words and deeds men and women of all ages would see the true light and find the right ways of life for their happiness.

The Armenian Church has always observed this presentation of the child Jesus to the Temple as one of the holiest days of the year. According to the ancient tradition of the Armenian Church, mothers used to bring their newly born children to the church on the eve of the fourteenth of February where the feast is celebrated, and they presented them to the parish priest, who in his turn took the children up to the altar and presented them to God for His divine blessing. As Jesus was known to be the Light of the world, Armenian families used to take with them a lighted candle from the church by which they put on the light in their own homes, thus symbolizing Christ’s presence in the family. Therefore, the fourteenth of February, “The Feast of the Presentation of Jesus to the Temple”, should be observed as the day



of children. It should be a day when we should pay attention to the upbringing of our children in the Christian faith, which is the light of the world.

From the time of St. Gregory, the Armenian Church has taken some ancient pagan traditions and have Christianized them. That is to say these pagan traditions have been kept alive in our Christian life, linking their celebrations with the major events of Jesus' life.

Our fathers used to worship a god under the name of Mihr as the god of light and fire. They used to have a big fire in the courtyard of the ancient pagan temples and worshipped Mihr through their adoration of the fire. St. Gregory took this tradition and continued it in the Armenian Christian Church by having the fire lit in the church courtyard with a candle brought out of the church by the priest. Until today, in many parts of the Middle East and elsewhere, Armenians keep that tradition, and the young people rejoice by having folkloric dances and jumping over the fire, thus keeping alive the pre-Christian tradition as a cherished national custom.

**Բ. Կիրակի**

**Ս. ՂԵԻՈՆԴԵԱՆՑ ԵՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ**

- **Նիւթ՝ Հաւատքի եւ Հայրենիքի Արեան Մկրտեալներ**  
(Մահ իմացեալ անմահութիւն է)

**Աւետարանի Հատուածներ** (Եսայի 35:1-2, 61:67, Ա. Պետրոս 1:3-9, Իմաստութիւն 3:1-8, Եսայի 49:8-9, Ղուկաս 6:20-26, 12:4-10, Եբրայեցիս 12:1-7, ):

- **Տէրունական աղօթք «Հայր Մեր» եւ**  
«Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել» (Մատթէոս 10:28):
- **Սաղմոսի ընթերցում/ ուսուցում**  
[10 վայրկեան]  
Սաղմոս 35:1-8  
- Դէ՛մ դիր, ո՛վ Տէր, անոնց՝ որոնք ինծի կ'ընդդիմանան: Կռուէ՛ հետը անոնց՝ որոնք ինծի դէմ կը կռուին:  
= Ա՛ն գրահդ եւ ասպարդ, եւ փութա՛, օգնէ՛ ինծի:  
- Վերցո՛ւր նիզակդ եւ տապարդ՝ զիս հալածողներուն դէմ, եւ վստահեցո՛ւր զիս, ըսելով.- «Քու փրկութիւնդ է՛ս եմ»:  
= Թող ամօթով մնան ու խայտառակուի՛ն անոնք՝ որ իմ մահս կ'ողզեն. շփոթահար՝ թող է՛տ քաշուին անոնք՝ որ ինծի չարիք կը նիւթեն:  
- Տիրոջ հրեշտակը թող փախուստի՛ մատնէ զանոնք, ինչպէս յարդը՝ հովէն քշուած:  
= Անոնց ճամբան խաւա՛ր ու սայթաքուն թող ըլլայ, երբոր Տիրոջ հրեշտակը հալածէ զիրենք:  
- Որովհետեւ առանց պատճառի ինծի համար թակարդ լարեցին, առանց պատճառի փոս փորեցին ինծի համար:  
= Անսպասելիօրէն թող կորուստի մատնուին, իրենց լարած թակարդին մէջ թող որ իրենք բռնուին, իրենք իյնան իրենց բացած փոսին մէջ ու կորսուին:
- **Սաղթանք/ աղօթք/ ոսկեղէն համարի ուսուցում** [10 վայրկեան]

**2.– Sunday**

**Sts. GHEVONTYANTS and VARTANANTS**

- **Theme: Baptized by Blood For Faith and Country**  
(To die willingly for a just cause is immortality)

**Biblical Readings:** (Isaiah 35:1-2, 61:67, I Peter 1:3-9, Wisdom of Solomon 3:1-8, Isaiah 49: 8-9, Luke 12: 4-10, Hebrew 12:1-7, Luke 6:20-26).

- **Lord’s Prayer then biblical recitation:**  
“Do not be afraid of those who kill the body but cannot kill the soul” (Matt. 10:28).
- **Reading/ teaching of Psalms [10 minutes]**  
Psalm 35:1-8  
- Oppose those who oppose me, Lord, and fight those who fight against me!  
= Take your shield and armor and come to my rescue.  
- Lift up your spear and war ax against those who pursue me. Promise that you will save me.  
= May those who try to kill me be defeated and disgraced! May those who plot against me be turned back and confused!  
- May they be like straw blown by the wind as the angel of the Lord pursues them!  
= May their path be dark and slippery while the angel of the Lord strikes them down!  
= Without any reason they laid a trap for me and dug a deep hole to catch me.  
- But destruction will catch them before they know it; they will be caught in their own trap and fall to their destruction!
- **Teaching of Prayer/biblical verses**  
[10 minutes]

“For I am certain that nothing can separate us from his love: neither death nor life, neither angels nor other heavenly rulers or powers, neither the present nor the future, neither the world above nor the world below –there is nothing in all creation that will ever be able to separate us from the love of God which is ours through Christ Jesus our Lord” (Romans 8:38-39).

«Համոզուած եմ եւ հաստատ գիտեմ, որ ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ ոեւէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Հռոմայեցիս 8:38-39):

- **Շարականի ուսուցում** [10 վայրկեան]

### **Սրբոց Ղեւոնդեանց Ողոր ԴԿ**

*Արեգակն արդարութեան ի Հայաստան ծագեալ պայծառացուցեր սուրբ գեկեղեցի հեղմամբ արեան սրբոցն. մաղթանօք սոցա խընայեա ի մեզ պարգեւատու բարեաց եւ ողորմեա քո արարածոց:*

*Պանծալի սուրբ գաւակօք հովիւքըն զըւարթունք, հրով հոգւոյն շիջուցին ըզբոցն ըզկրակապաշտ պարսիցն. մաղթանօք...*

*Պարթեւական տեսանողին յառաջագոյն ազդեցութեամբ գհաւատոյ որդիս սրբոյն Գրիգորի պրսակազարդ տեսեալ. մաղթանօք...*

### **Մանկունք ԴԿ**

*Անճառելի՛ բանդ Աստուած որ վասըն մեր էլեր ի խաչ, բարձրացար ի մէջ երկրի բարձեր գյանցանս նախաստեղծին. գերահրա՛շ զօրութեամբ յաղթեցեր մահու, յարուցեալ երեքօրեայ լոյս ծագեցար տիեզերաց:*

*Հուսաւորի՛չն ամենեցուն Ղեւոնդիէ սուրբ վարդապետն, խոհական մեծ խորհրդով խրրատեալ լրցոյց գաշակերտեալսն. ծաւայեա՛լ զլոյս գիտութեան յոգիս արանց կատարելոց. կամաւոր յօժարութեամբ կատարեցան սիրով փրկչին:*

- **Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns** [10 minutes]

### **Sts. Ghevontyants**

*O Sun of righteousness, shining forth in Armenia, thou hast brightened the holy Church by the shedding of the blood of the saints; through their prayers spare us, O thou giver of good gifts, and have mercy on thy creatures.*

*Together with their glorious and holy children the watchful shepherds quenched the flame of the fire-worshipping Persians with the fire of the Spirit; through their prayers spare us, O thou giver of good gifts and have mercy on thy creatures.*

*The Parthian seer, Saint Gregory, by a prophetic inspiration foresaw his children of the faith adorned with the crown; through their prayers spare us, O thou giver of good gifts, and have mercy on thy creatures.*



## Սրբոց Վարդանանց ԴԿ

Նորահրա՛շ պրսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց, վառեցար զինու հոգւոյն արիւրար ընդդէմ մահու. Վարդա՛ն քաջ նահատակ որ վանեցեր ըզթրչնամին, վարդագոյն արեամբրդ քո պրսակեցեր գեկեղեցի:

- **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**

Սուրբ Աստուած, սուրբ եւ հրգօր, սուրբ եւ անմահ,

որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

(Խաչի, Եկեղեցւոյ, Սրբոց եւ Պահոց Կիրակիներուն):

- **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան Ճաշու Աւետարանի, ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ:** [15 վայրկեան]

- **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն** [5 վայրկեան]

Պատմական համառօտ պատկերը ներկայացնել 4-5-րդ դարերուն ուր Հայաստան կռուախնձոր էր Հռոմի եւ Պարսկաստանի երկու գերհզօր մրցակից կայսրութիւններու միջեւ: Հայաստան քաղաքական անկախութիւնը կորսնցուցած՝ ենթակայ էր ձուլման եւ կործանման պարսկական ծաւալապաշտ քաղաքականութեան: Բուռ մը ըմբոստ ժողովուրդ ուխտապահ նախարարներու առաջնորդութեամբ, յանուն քրիստոնէական հաւատքի եւ հայրենիքի պաշտպանութեան՝ անհաւասար պատերազմ շղթայագերծեցին Վարդան Մամիկոնեանի սպարապետութեամբ, 451-ին:

Վարդանանց հաւատամարտը երեսուն տարի շարունակուեցաւ, մինչեւ որ պարսից եւ հայոց միջեւ կնքուեցաւ Նուարսակի դաշնագիրը 484-թին: Այս դաշնագիրով հայեր ստացան խղճի ազատութիւն եւ ներքին ինքնավարութիւն:

Այսօր եւս Վարդանանցը տարբեր տեսակի անուններով եւ ճակատամարտներով ամէնուրեք կը շարունակուի եւ տարբեր տեսակի Յազկերտներ կը սպառնան մեր ինքնութիւնը ջնջել, հաւատքը եղծանել, մեզ այլասերել եւ ձուլել:

## Hymn to the Vartanian Saints

Norahrash besagavor yev zoraklookh arakeenyatz varetzar zeeno hokvooy areeapar untem mahoo, Vartan kach nahadag vor vanetzer uzshnameen vartakooy aryampt ko bsagetzer zegeghetsee.

Miraculously crowned General of the virtuous, you who were courageously armed against death with the weapons of the Spirit; Vartan, O Brave Martyr, you who chased the enemy, and with your red blood, crowned the Church.

- **Before the Gospel reading students must sing**

### Trisagion “soorp Asdvadz”

Holy God, holy and Mighty, holy and immortal, Who was crucified for us, have mercy upon us.

For the feasts of the Cross, of the Church and for Saints’ and Fasting days (Repeat thrice).

- **It is preferred to read the Gospel of the day. The teacher should explain/comment on what was read.** [15 minutes]
- **Announcements/ recommendations/ suggestions**
- **Collection**
- **Sunday School’s anthem**
- **Students depart to their classes**
- **Closing Prayer**

“No one can shake us from our belief, neither angels nor humans, neither sword nor fire, neither water nor any painful blows” (Yeghishe)

- Թեխնոլոգիաներ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]
- Կամաւոր նուէրներու հաւաք
- Կիրակնօրեայի քայլերդ
- Դասարանային աշխատանք
- Փակման/արձակման Աղօթք

## ԱՂՕԹՔ՝ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ

«Այս հաւատքէն, մեր այս համոզումներէն ո՛չ ոք կրնայ մեզ խախտել, շեղել մեզ մեր սկզբունքներէն, ո՛չ հրեշտակները, եւ ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ, ո՛չ հուրբ եւ ոչ ալ ջուրը»:  
(Եղիշէ)

Ով սուրբ Վարդան-Չօրավար եւ անմահ Վարդանանք, դուք Քրիստոսի սուրբ Կրօնքը պաշտպանելու համար յանձն առիք թափել ձեր արեան մինչեւ վերջին կաթիլը, աղօթեցէ՛ք մեզի համար, որ հաւատարմօրէն պահենք մեր Ուխտը՝ Քրիստոսի հանդէպ, եւ պատրաստ ըլլանք նոյնիսկ մեր կեանքը գոհելու, մեր սուրբ Հաւատքը պաշտպանելու համար:

Ով անմահ նահատակներ, դուք եղաք Հաւատքի եւ հայրենասիրութեան ջահեր, եւ ձեր միջոցաւ Հայ ազգը անշեղ պահեց իր հաւատարմութիւնը Քրիստոսի հանդէպ: Ընդունեցէ՛ք մեր աղօթք աղաչանքը, մեզի շնորհելու հաւատքի արիութիւն՝ ըլլալու անկեղծ քրիստոնեաներ եւ ճշմարիտ հայրենասէրներ:

Ով Քրիստոսի պանծալի Նահատակներ, դուք որ հերոսական ճակատամարտով ազատեցիք Հայ ազգը բարոյական ուժացումէ, եւ ձեր խաչակիր դրօշին տակ միացուցիք հայերը, ընդունեցէ՛ք մեր աղօթք աղաչանքը եւ Քրիստոսի մօտ մեզի համար բարեխօսեցէ՛ք՝ համախմբելու Հայ ազգի ցիրուցան գաւակները, որպէսզի Քրիստոսով զօրացած՝ միասնականութեամբ պատուաւոր տեղ գրաւէ աշխարհի ազգերու մէջ եւ ըլլայ փառաբանիչը Ամենասուրբ Երրորդութեան:



Հ ո ո վ մ է ա կ ա ն քրիստոնեայ կայսրութեան մրցակից գրադաշտ պարսկական պետութիւնը, հայոց քրիստոնեայ դարձին ի վեր (301) միշտ ջանաց հայերը կրօնակից յոյներէն հեռու պահել: Անշուշտ պարսիկներ գիտէին լաւապէս օգտուիլ հայ նախարարական տուներու ներքին մրցակցութիւններէն Հայաստանը ընկձելու, բաժանելու եւ վերջնականապէս իրենց մէջ ձուլելու համար: Յոյներն ալ իրենց կարգին միշտ փափաքած էին տեսնել տկար ու ենթակայ Հայաստան մը: Այդ իսկ պատճառաւ երբ առիթը ներկայացաւ, անոնք 387-ին եւ 428-ին իրենց միջեւ կը բաժնեն Հայաստանը ու կը կործանեն հայոց Արշակունի թագաւորութիւնը: Հ ո ո վ մ է ա կ ա ն կայսրութեան ժառանգորդ Բիւզանդիոն կը տիրանայ Հայաստանի արեւմտեան բաժինին, իսկ Սասանեան կայսրութիւնը՝ արեւելեան Հայաստանին, գոր իր ներկայացուցիչ մարգպաններով կը կառավարէ: Երբ Յագկերտ Բ. (439-457) գահ կը բարձրանայ, կ'ուզէ հայերուն բռնի պարտադրել որ ուրանան իրենց կրօնը եւ մագղէական կրակապաշտութիւնը ընդունին: Հայոց աւագանին, Յովսէփ կաթողիկոսի նախագահութեամբ Արտաշատի մէջ ժողով մը գումարելով, կտրականապէս կը մերժէ Յագկերտի պահանջը: Յագկերտ հայ նախարարները Տիգրան կը հրաւիրէ մերժողական անոնց պատասխանին շուրջ բացատրութիւն ստանալու: Տիգրանի մէջ ան հայ նախարարներուն կը սպառնայ զանոնք սպաննել ու Հայաստանը կործանել եթէ չուրանան իրենց հաւատքը: Հայրենիք վերադառնալու եւ պարսից դէմ ըմբոստութիւն կազմակերպելու համար հայ իշխաններ երեսանց կ'ուրանան իրենց հաւատքը: Այնուհետեւ Անգղ գիւղի ըմբոստութեամբ եւ Ծահապիփանի ժողովով ապրատամբութեան ազգանշանը կը տրուի

գլխաւորութեամբ հայոց սպարապետ՝ Վարդան Մամիկոնեանի: Հայոց դիմումը՝ օժանդակութիւն խնդրելու Յունաց Մարկիանոս կայսրէն, անպատասխան կը մնայ: Հայաստան մինակը կը դիմագրաւէ պարսկական 300 հազարի հասնող հզօր բանակը: Ճակատագրական պատերազմը տեղի կ'ունենայ 451-ին: Հայոց 60 հազար քաջարի բանակը հաւատքի ու հայրենիքի անկախութեան Աւարայրի ասեղ հաւատամարտին զոհ կու տայ իր դիւցազն սպարապետը Վարդան իր 1036 նիգակակիցներով: Իսկ պարսիկներ աւելի քան չորս հազար մեռեալ կը ձգեն Տղմուտի ափերուն: Կաթողիկոսը, եկեղեցականաց դասն ու ազնուականներ Պարսկաստան գերի կը տարուին, ապա հոն կը նահատակուին: Իսկ կարգ մը նախարարներ խուժիտան կ'աքսորուին: Մինչ հայոց մարգպան՝ ուխտադրուժ Վասակ Սիւնի, որ Աւարայրի ճակատամարտի նախօրեակին դաւաճանելով անցած էր պարսից կողմը՝ Յագկերտի հաճելի ըլլալու համար, տակաւին կը շարունակէ աւերներ գործել:

Աւարայրի ճակատամարտէն ետք ուխտապահ նախարարներու առաջնորդութեամբ հայեր լեռներու եւ բերդերու մէջ ամրացած կը շարունակեն դիմադրութիւնը: Յագկերտ խաղաղութիւնը վերահաստատելու եւ հայերը կրակապաշտ դարձնելու ճիգերուն մէջ ձախողած եւ յուսահատած՝ պաշտօնանկ կ'ընէ ու կը բանտարկէ Վասակը: Հայոց վրայ նոր մարգպան կը նշանակէ Ատորոմիզ պարսիկը:

Խղճահար ու լքուած ամէնքէն՝ Վասակ բանտին մէջ որդնոտած կը մեռնի:

Յագկերտի յաջորդ Պերոգի (458-484) թագաւորութեան ամբողջ ժամանակաշրջանին, գրեթէ երեսուն տարի, հայեր զանազան ճակատներու վրայ հրոսակային յարձակումներով դիմադրական ասաւոր պայքարներ կը մղեն:

Ի վերջոյ Պերոգի յաջորդ՝ Վաղարշ արքան, կը ստիպուի խղճի, կրօնի ու հայրենիքի ազատութեան համար մարտնչող ըմբոստ հայերու հետ հաշտութեան դաշինք կնքել եւ ընդունիլ հայոց պայմանները: Արդարեւ Ակոռիի, Ներսէհապատի, Ճարմանայի, Շտէի եւ շատ մը այլ ճակատամարտներու հերոս, եւ նահատակ Վարդանի եղբօրորդի Վահան Մամիկոնեանի յաղթանակները պատճառ կ'ըլլան որ Վաղարշ 484-ին



*մարզպան նշանակէ Վահանը եւ Նուարսակի մէջ խաղաղութեան դաշինք կնքէ, ուր հայեր այնուհետեւ ազատութիւնը պիտի ունենային անկաշկանդ իրենց Աստուածը պաշտելու, ազգային ավանդութիւնները պահելու եւ հայրենի օրէնքներն ու արդարութիւնը*

**վերահաստատելու:**

**Վահան մինչեւ իր մահը 510 թուական խաղաղութեամբ կը կառավարէ Հայաստանը:**

Վարդանանքի «իմացեալ մահով» սկսած գոյամարտը անկասկած որ նոր ուղի բացաւ Հայոց Պարմութեան մէջ եւ Վարդանի եղբոր Հմայեակի որդւոյն՝ Վահանեաց շարժումով, Վարդանանց հերոսամարտը վերածուեցաւ քաղաքական յաղթանակի՝ Սասանեան նուաճողական կայսրութեան դիմաց շահուած: Ի վերջոյ պարսկական հզօր կայսրութիւնն էր որ փոքրիկ Կու փար ապրելու կամքով մեռնի՛լ գիպցող «բուռ մը ըմբոսներու» եւ իրաւական ճանաչումով կ'ընդունէր հայ ժողովուրդի մարդկային փարոսկան իրաւունքները յարգել, թոյլաբերելով հայ կրօնի ազգութիւնը եւ ազգային արժանապարտութիւնը, եւ ինքնավարութիւնը:

Գերպետութեան մը դաժան բռնութեան դէմ ծառացող փոքր ժողովուրդի մը ազատագրական պայքարի ու յաղթանակի խորհուրդը իր մէջ խրացնող Վարդանանց պարմական այս դէպքը դարեր ներշնչած ու ոգեւորած է ազատաբենչ ոգիները մեր հայ սերունդներուն եւ ազատութեան մարտիկներուն՝ Վարդանանց գաղափարաբանութեան անմահ գիտուորագրեալներուն: Հոն միշտ խրացած փեսնելով ժողովուրդի մը անմահ երթը եւ յաւիտենական խորհուրդը **Հայ Ոգիին:**

Վարդանանց օրինակով հայոց պարմութիւնը լեցուն է ապստամբութիւններով, սխրագործութիւններով եւ վերապրումի արի՛ դրուագներով, մղուած ո՛չ թէ աշխարհակալական կամ նուաճողական նկարումներով, այլ՝ յանուն հայրենիքի ու հաւաքի, յանուն խղճի ազատութեան եւ մարդկային փարոսկան իրաւանց ձեռքբերման ու պաշտպանման եւ այս բոլորը այն դարաշրջաններուն, երբ ներկայ քաղաքակիրթ Արեւմտեան աշխարհը կ'ապրէր կիսավայրենի եւ անբառի

օրէնքներով: Նուարսակի դաշնագրէն գրեթէ հազար տարի ետք էր միայն, որ Անգլիոյ մէջ 1215-ին, ճոն թագաւորի կողմէ փաստաթուղթ մը ստորագրուեցաւ **Magna Carta**, որ կը պաշտպանէր անհարի իրաւունքները եւ ազատութիւնները ընդդէմ կառավարական կամ պետական ճնշումներու: Նոյն ձեւով **English Bill of Rights**-ը, վաերացուած 1689-ին, քաղաքացիները կը պաշտպանէր պետական որեւէ ճնշումէ: Վերջապէս, **American Bill of Rights**-ը, որդեգրուած 1791-ին, եկաւ ամբողջացնելու եւ կարարեղագործելու արդի պարմութեան եւ ժամանակներուն մարդկային իրաւանց եւ ազատութիւններու թղթածրարը, որ հիմքը կը կազմէ բոլոր փեսակի ազատութիւններու:

- Փա՛րք Վարդանանց հաւաքամարտի դիւցազուններուն:
- Փա՛րք Հաւաքի եւ Հայրենիքի սուրբ խորաններուն իրենց կեանքերը անսակարկ նուիրաբերող Իմացեալ Կեանքի կերտիչներուն:
- Փա՛րք ուխտապահ զաւակներ ծնող հայ ժողովուրդին:
- Փա՛րք մեր նորօրեայ հայրեր Հայաստանի Վարդանի ժառանգորդ ազատութեան կերտիչներուն:

Յաւէ՛ր օրհնութիւն, անասանութիւն եւ յաղթութիւն բոլոր ժամանակներու հայրենադաւ Վասակներու եւ նոր փեսակի Յազկերտներու դէմ *աներկիւղ ծառացող* Հայկեան Յեղի անմահ Ոգիի ժառանգորդներուն:

**Միտոն Ծ. Վրդ Ազնիկեան**

## ARMENIAN HISTORY

### Armenia Under Persian and Byzantine Rule (428-640)

The conflict between pro-Persian and pro-Byzantine *Nakharars* resulted the destruction and partition of



the Armenian kingdom. Both the crown and religious leaders of Armenia saw the partition of Armenia as a devastating event. Both realized the perils to an Armenia under Byzantine and Persian administrative and religious control.

Emperor Theodosius and Shapur III, in 387 A.D. divided Armenia among them. Byzantium received the western part or Lesser Armenia. Arshag III, remained on as king and a vassal of Byzantium. Persia received the Eastern part or the Greater Armenia, and Khosrov IV continued as king and vassal of the Sassanids. Upon the death of king Arshag, Byzantium did not appoint another Armenian king and thus Arshakuni dynasty came to an end. Greek governors and culture began to rule in western Armenia. In Persian Armenia, Khosrov IV was succeeded by Vramshapuh (389-417), who nominated Sahag, the last catholicos of the Gregorid line. Vramshapuh is a significant figure in Armenian history, as a motivating force behind the creation of the Armenian alphabet in 404. After the death of Vramshapuh, his son and successor king Ardashes IV (422-428), upon the request of *Nakharars* was deposed in 428, and Armenia became a land divided with no national leader. The Sassanids appointed a governor or *marzban* to rule the Lesser Armenia and eastern provinces.

For the first fifty years following the partition, Armenia was generally left alone in its religious and cultural affairs. In Persian Arme-

nia the situation altered in 439, when Hazgerd II (439-457) became king. He and members of his court attempted to impose Zoroastrianism on all of the non-Persian peoples living in his empire. Armenia now had to make a choice between accepting the worship of fire or resorting to arms. During the reign of catholicos Hovsep and under General Vartan Mamigonian's leadership, a national assembly was held at Ardashad to respond to Hazgerd's demand. They examined all the points raised in the king's threatening letter-directive, and prepared a fitting response letter in which they declared to Hazgerd that, although they were faithful to Persia, they were also faithful to their Church and Christian faith. Armenians' provocative respond and rejection to accept Zoroastrian religion, resulted in harsh consequences. It was seen as a challenge and open rebellion against the Persian empire. On the other hand, another pro-Persian faction led by the Armenian governor or *marzban*, *Vasag Siuni*, sought a dialogue and compromise with Hazgerd. In search of a stronger ally, Armenians sought unsuccessfully aid from Constantinople. Consequently in 451 the Armenians with an army of 60 thousand men led by General *Vartan Mamigonian*, were forced to fight the famous battle of *Avarair* against the 300 thousand highly trained Persian army, who also had elephants. At a crucial moment in the battle, Vassag Siuni did not join the battle and has been accused of treachery ever since. However, he, along with the pro-Persian *nakharars*, was later held responsible for the insurgency and imprisoned by the Persians.

As a result of the battle, the Armenians were defeated. Although Vartan with his 1036 soldiers were martyred but their rebellion and resistance against the Sassanids oppression continued more than thirty years. Armenian rebels under the leadership of Vahan Mamigonian, the nephew of Vartan, sought vengeance and conducted successful guerilla warfare against the Persians. Peroz (459-484), Hazgerd's son and successor while defending Iran's eastern borders against nomadic invaders known as the "White Huns", suffered a massive defeat on the Caucasus front. King Peroz himself fell in battle, causing great confusion throughout the Persian Empire. Since the Persian armies could not fight on two



fronts, king Vagharsh (484-531), Peroz's brother and successor, was forced to conclude peace and accept Armenian terms. In 484 a peace treaty known as Nuvarsak was signed, and was agreed that Armenia would remain Christian and have freedom of religion; everyone

would be equal under the law and would have the right to appeal to the Persian court directly; and no apostate could hold high office. After this achievement Vahan was appointed governor or *marzban* and ruled for two decades. This was the first time that a treaty concerning *human rights* and *liberties* had ever been signed in the East.

Armenians today celebrate Avarayr and Nuvarsak as moral victories. They view the struggle as a symbol of the survival of their identity against powerful forces.

The Armenians still hold what the Vartanians were fighting for their Christian faith and heritage. The Persians lost what they were trying to impose upon Armenians, their own religion.

Vartan has become the most outstanding hero of the Armenian nation. He, with his comrades in arms, together with millions of others following their example throughout Armenian history, laid down their lives so that the coming generations of Armenians might worship their Lord and God freely.

The war of St. Vartan was fought exclusively on the issue of freedom of conscience, and as such, it constitutes a glorious event in the struggle of humanity for freedom of religion. Vartan and his valiant men were the pioneers of freedom of conscience in the middle of the fifth century.

As a result of such battles in our history and the fine spirit which the Vartanians displayed, the Christian religion has survived in Armenia throughout centuries and under most trying circumstances. We are proud inheritors of this unconquerable spirit, so conspicuously manifested on the Field of Avarayr in fifth century. May God make us worthy of this glorious legacy.



## ՎԱՐԴԱՆԱՇՈՒՆՁ ԵՐԳԵՐ

### Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ Դ.Կ.

Նորահրա՛ջ պըսակա-  
լոր եւ զօրագլուխ  
առաքինեաց, վառե-  
ցար զինու հոգւոյն  
արիաբար ընդդէմ  
մահու. Վարդա՛ն քաջ  
նահատակ որ վանե-  
ցեր ըզթըշնամին,  
վարդագոյն արեամ-  
բըղ քո պըսակեցեր  
գեկեղեցի:



### ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ

Իմ հայրենեաց հոգի  
Վարդան,  
Հոգիս հոգւոյդ եղնի  
ղուրպան.  
Որ Տղմուտի ափերի  
մօտ,  
Վաթսուէն հագար  
կտրիճներով,  
Զարկիր, գարկուար,  
ինկար քաջ-քաջ,  
Պարսիկ սփռած ի ձախ  
ու աջ.

Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
Արեւս ար՛ւուդ եղնի զուրպան:

Երկնաւո՛ր թագաւորին զինու յաղթեալ  
պատերազմին, խոհական իմաստութեամբ խո-  
հեմացեալ անճառապէս. Խորէ՛ն, խորհրդա-  
կան եւ ծանուցեալ անուն բարի, խաչելոյն  
վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պըսակեցաւ:

Բամկակա՛ն խումբ հագարաց եւ երես-  
նից թիւ ընդ վեցից, որք ընդ նոսին նահա-  
տակեալք արիաբար պատերազմաւ. եւ հեղին  
զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ. ընդ  
նոսին պըսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն:

Աւետարանն ու Խաչն առիր,  
Տարիր երկինք բարձրացուցիր,  
Եւ դուն ալ հետ թողիր գացիր,  
Անուշ արեւդ հողին տուիր,  
Որ հայրենեաց շողայ արեւ  
Շաւարշանայ դաշտին վերեւ.

Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
Արեւս ար՛ւուդ եղնի զուրպան:

### ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

Մեծ պայքարի ազատութեան  
Շատ գոհեր տուինք,  
Վառ յոյսերով երջանկութեան  
Սէրը երգեցինք:

Մեր արիւնը, մեր արցունքը  
Դարեր շարունակ,  
Փայփայեցին մեր յոյսերը  
Երկար ժամանակ:

Ապրի հայը, հայ հերոսներ,  
Քաջաց գաւակներ,  
Սահակ-Մեսրոպ (Վարդան-Ղեւոնդ)  
Անմահ հայեր, լուսատու ջահեր:

Արիւնդ կարմիր-կարմիր թափուաւ,  
Դաշտ ու ծաղիկ ներկընցաւ.  
Լուսնակն ելաւ ամպի տակից,  
Պաղ-պաղ թափեց ցօղիկն յաչից,  
Որ հայրենեաց վարդեր բացուին,  
Պլպուլն երգէ դրախտի սարին.  
Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
Արեւս ար՛ւուդ եղնի զուրպան:

**ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ**

Հիմի՞ էլ լուենք, եղբարք, հիմի՞ էլ,  
Երբ մեր թշնամին իր սուրն է դրել,  
Իր օրհասական սուրը՝ մեր կրծքին,  
Ականջ չի դնում մեր լացուկոծին:  
Ասացէ՛ք, եղբարք Հայեր, ի՞նչ անենք,  
Հիմի՞ էլ լուենք:

Հիմի՞ էլ լուենք, երբ մեր թշնամին  
Դաւով, հրապոյրով տիրեց մեր երկրին,  
Ջնջեց աշխարհից Հայկեայ անունը,  
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը:  
Խլեց մեզանից թագ, եւ խօսք եւ գէնք,  
Հիմի՞ էլ լուենք:

Թող լուէ մոռնջը, անդամալոյծը,  
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը,  
Բայց մենք որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝  
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ.  
Գոնէ մեր փառքը մահո՛վ յետ խլենք,  
Ու այնպէ՛ս լուենք:

**ՄԵՆՔ ՔԱՋ ՎԱՐԴԱՆԻ ՏՈՀՄէՆ ԵՆՔ**

Մենք քաջ Վարդանի թոռներ ենք, չենք վախի,  
Մանր-մոռնր փորձանքներից չենք փախչի,  
Մենք դեռ փոքրուց միշտ սիրել ենք քաջութիւն  
Ինչ էլ որ լինի՝ չենք հանդուրժի պարտութիւն:

Ուրեմն՝ առա՛ջ, գարկենք թմբուկ  
յաղթական,  
Տանք թշնամուն մենք ծեծ ու ջարդ  
պատուական,  
Թող իմանան՝ մենք չենք դառնայ  
խաղալիք,  
Այնպէս պիտ՝ ծեծենք, որ յիշեն հօր  
հարսանիք:

Տոհմը մեր եղել է քաջերից քաջը,  
Անարգել է կայծակների շառաչը,  
Մենք էլ նրա գաւակներն ենք հարազատ,  
էլ ուրիշ ժառանգ չկայ, չկա՛յ մեզնից գատ:

Ուրեմն՝ առա՛ջ, գարկենք թմբուկ յաղ...

**ՎԱՐԴԱՆԱՆՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Թէ հայրենեաց պսակադիր  
Գողթնի քնարք լուեր են,  
Երկնից թող գան անմահ հոգիք՝  
Հայոց քաջերն պսակել:  
Մասեաց գագաթն թող գան բազմին  
Երկնից գունդ-գունդ հրեշտակներ,  
Աստուած իջեր ի Հայաստան՝  
Հայոց արիւն հոտոտել:  
Փախէ՛ք ամպեր Շաւարշանէն,  
Այ մի՛ ցողէք ձեր ցողեր.  
Շաւարշանը ոռոգուած է  
Հայոց քաջաց արիւնով:  
Եւ կը ծլին ու կը ծաղկին  
Այն դաշտին մէջ ո՛չ խոտ, վարդ,  
Այլ Վարդանայ ինկած երկիր  
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:  
Քանդակագործ քաջ Եղիշէն  
Գրիչ ի ձեռն գայ յԱրտագ,  
Չափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ՝  
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ:  
Ո՛հ, Վարդանայ անուան արժան  
Մասի՛ս կանգնի մահարձան,  
Մենաստաններ, սուրբ տաճար:

**ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՑ**

Լուեց: Ամպերը եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին:  
Մնացի մենակ, հոգիս վրդոված,  
Ձեռներըս ծոցիս, գլուխս քարչ առած:

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,  
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
Նորա տխրամած դէմքը նայելիս՝  
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս:

Ա՛խ ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,  
Գուցէ քո փայլից փայլ տաս եւ Հային:

Պատմէ՛ շատերուն Վարդանի մահը,  
Թէ ի՛նչպէս կորաւ Հայ ազգին գահը:  
Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը, աշխարհն Հայաստան:



## ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ով դու բարեկամ այրած սրտերու,  
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,  
Երգէ՛ պրլպուլիկդ, երգէ՛ ի սարէն,  
Զանմահ քաջն հայոց, երգէ՛ հոգւոյս հետ:

Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,  
Սրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.  
Ի խաչին թեւէն թրուայ ու հասայ,  
Գլտայ գքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:

Պրլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին  
Թէ չէ՛ հաւ՝ պրլպուլ մեր Աւարայրին.  
Եղիշեայ հոգեա՛կն է քաղցրախօսիկ,  
Որ զՎարդան ի վարդըն տեսնէ կարմրիկ:

Զմեռն յանապատ կու գնայ, կայ ի լաց,  
Գարունն յԱրտազ գայ ի թուփ վարդենեաց,  
Երգել ու կանչել յԵղիշէին ճայն  
Թէ պատասխանիկ մ՛արդեօք տա՞յ Վարդան:

## ՄԱՐՏԻՐՈՄՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Լուսաւորիչ առաքեալներ  
Սիրոյ մէջ մկրտուեցան,  
Ճշմարտութեան սուրբ վկաներ  
Յիսուսի նմանեցան:

Արդարներուն յիշատակը  
Օրհնութեամբ կը կատարուի,  
Տիրոջ սիրոյն գոհուածներուն  
Երանի, բի՛ւր երանի:

Սիրոյ ճրագ առաջնորդներ  
Աշխարհի լոյս սփռեցին,  
Անարգուեցան, հալածուեցան,  
Բայց շատ է հոն վարձքերնին:

Երբ Աստուծոյ այն օրը գայ,  
Սրբոց խաչն ալ Տէրունի,  
Երանելի ու պանծալի՛  
Կը շողայ ու կը փայլի:

Փոքրը հօտին քաջ հովիւներ  
Անձերնին սուրի տուին.  
Կրակներու մէջ օծուելով  
Պաշտօննին կատարեցին:

Ուր որ Յիսուս, Աւետարան  
Քարոզուի ու պատմուի,  
Սրբոց վարքն ալ իբր օրինակ  
Կը յիշուի ու կը տօնուի:

Գ.– Կիրակի

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

- Նիւթ՝ Դրախտային գերերջանիկ կեանք

Աւետարանի հատուածներ (Եսայի 58:1-14, Հռոմայեցիս 13:11-14, 14:1-23, 16:25-27, Մատթէոս 6:1-21):

- **Տէրունական աղօթք «Հայր Մեր», եւ**  
*«Զօրացիր ու քա՛ջ եղիր: Մի՛ վախճար բնաւ եւ մի՛ վարանիր, որովհետեւ ես՝ քու Տէր Աստուածդ, քու հետդ եմ ո՛ւր որ ալ երթաս»* (Յեսու 1:9): **Կամ**

*«Տիրոջ համար հնազանդութիւնը գոհէն եւ խօսք մտիկ ընելը խոյերու ճարպէն շատ աւելի լաւ է»* (Ա. Թագաւորաց 15:22):

- **Սաղմոսի ընթերցում/ ուսուցում**  
 [10 վայրկեան]  
 Սաղմոս 8

- Ո՛վ Տէր, մեր Տէրը, ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ: Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը:

= Բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստդ հիւսեցիր քեզի հակառակողներուն դիմաց, որպէսզի լուսթեան մատնես թշնամիներդ եւ հակառակողներդ:

- Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ.- Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց կու տաս անոր:

= Զայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատիւով զայն պսակեցիր:

- Քու բոլոր ստեղծուածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ:

= Հօտերն ու արջարները, նաեւ բոլոր վայրի անասունները:

- Երկինքի թռչուններն ու ծովուն ձուկերը, եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները:

- **Մաղթանք/աղօթք/ոսկեղէն համարի ուսուցում** [10 վայրկեան]

3.– Sunday

POON PAREGENTAN /Main Carnivale

- **Theme: Joyous perfect life in Paradise**

**Biblical Readings:** (Isaiah 58:1-14, Romans 13:11-14, 14:1-23, 16:25-27, Matthew 6:1-21).

- **Lord’s Prayer and**

*“Remember that I have commanded you to be determined and confident! Do not be afraid or discouraged, for I, the Lord your God, am with you wherever you go”* (Joshua 1:9). Or

*“It is better to obey the Lord than to sacrifice the best sheep to Him”* (I Kings 15:22).

- **Reading/teaching of Psalms** [10 minutes]  
 Psalm 8

- O Lord, our Lord, how excellent is Your name in all the earth, who have set Your glory above the heavens!

= Out of the mouth of babes and nursing infants You have ordained strength, because of Your enemies, that You may silence the enemy and the avenger.

- When I consider Your heavens, the work of Your fingers, the moon and the stars, which You have ordained, what is man that You are mindful of him, and the son of man that You care for him?

= For You have made him inferior only to Yourself, And You have crowned him with glory and honor.

- You have made him to have dominion over the works of Your hands; You have put all things under his feet.

= All sheep and oxen, even the beasts of the field.

- The birds of the air, and the fish of the sea. O Lord, our Lord how excellent is Your name in all the earth.

- **Teaching of Prayer/ biblical verses**  
 [10 minutes]

*“God created human beings, making them to be like himself. He created them male and female”* (Genesis 1:27).

«Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին համաձայն, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծեց զայն, արու եւ էգ ստեղծեց զանոնք» (Ծննդոց 1:27):

«Եթէ ուղիղ չվարուիս՝ մեղքի մէջ կ'իյնաս: Մեղքը քեզի կը սպասէ, բայց դուն պէտք է իշխես անոր» (Ծննդոց 4:7):

«Միրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ զօրութեամբդ» (Բ. Օրինաց 6:5):

«Չըլլա՛յ որ սիրտդ հպարտանայ եւ քու Տէր Աստուածդ մոռնաս» (Բ. Օրինաց 8:14):

- **Շարականի ուսուցում** [10 վայրկեան]

### Կանոն Բուն Բարեկենդանի ԴԿ

Բանն որ ընդ Հօ՛ր յէութեան եւ համագո՛յ Սուրբ Հոգւոյն, ըզպատկե՛րն իւրական խառնեալ ընդ հողանի՛ւթ բընութեանս, զոր զարդարեա՛լ փա՛ռօք եդ ի դրախտին՝ փափկութեա՛ն:

Յորում ցնծա՛յր զուարճացեալ անտըխրակա՛ն խընդութեամբ. քանզի զԱստուած տեսանէր միշտ խոնարհեա՛լ ի դրախտին, յորմէ զլուսո՛յն ճառագայթ տըպաւորէ՛ր ի յինքեա՛ն:

Վասն որո՛յ աղաչեա, մայր Աստուծո՛յ Մարիամ, զմիածի՛ն քո զՈրդին, զի շնորհեսցէ ըստ աւագակին ժառանգե՛լ վերլստին մեզ ըզդրախտին վայելչութիւ՛ն:

- **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**

Սուրբ Աստուած, սուրբ եւ հրգօր, սուրբ եւ անմահ

որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ:  
(Եկեղեցւոյ, Խաչի, Սրբոց եւ Պահոց)

- **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան Ճաշու Աւետարանի ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ** [15 վայրկեան]

“If you had done the right thing, you would be smiling; but because you have done evil, sin is crouching at your door. It wants to rule you, but you must overcome it” (Genesis 4:7).

“Love the Lord your God with all your heart, with all your soul, and with all your strength” (Deuteronomy 6:5).

“Be sure that you do not become proud and forget the Lord your God” (Deuteronomy 8:14).

- **Teaching of ‘Sharagan’ or Spiritual hymns**  
[10 minutes]

### Hymn of Poon Paregentan

The Word, of the essence of the Father and co-existence with the Holy Spirit, joined his own image with our earthly nature and adorned it with glory and placed it in the garden of delight.

Therein man joyfully exulted in gladness without grief, for he beheld God always coming down in the garden, and his soul was impressed by the radiance of the divine light.

Therefore pray for us, Mary Mother-of-God, to thine only-begotten Son that he may please to grant unto us, as unto the malefactor, to inherit again the glory of the paradise.

- **Before the Gospel reading students must sing Trisagion “Soorp Asdvadz”**

Holy God, holy and mighty, holy and immortal,

*Who was crucified for us, have mercy upon us.*  
(For feasts of Cross, feasts of the Church, Saints and Fasting days)

- **It is preferred to read the Gospel of the day. The teacher should explain/ comment on what was read.** [15 minutes]

- **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն** [5 վայրկեան]

Այս Կիրակի խօսիլ աշխարհի ստեղծագործութեան մասին շեշտելով մարդուն շնորհուած բացառիկ դերը որպէս «իշխան» եւ «պսակը արարչագործութեան»: Մարդը իր բանական եւ ազատ կամքով կոչուած էր Աստուծոյ գործակից ըլլալու: Բուն Բարեկենդանի Կիրակին մեզի կը յիշեցնէ, թէ ինչպէս նախամարդը դրախտային ճոխ կեանքի մը բարիքները կը վայելէր եւ Աստուծոյ մշտական ներկայութիւնը եւ հաղորդութիւնը ունէր նախքան իր անկումը: Բուն Բարեկենդանի Կիրակին կոչ մըն է ուղղուած մարդուն՝ յիշեցնելու իր առաքելութիւնն ու կոչումը, ա՛յս կեանքին ու աշխարհին մէջ իր *Դրախտ* ստեղծելու: Վերադարձի ճիգ մը երկնային, դրախտային այն կեանքին՝ որմէ վունտուեցաւ: Ինքնութեան, մարդկային նկարագրի ճշգրիտ որոնում՝ ինքզինք իրագործելու: Այդ կարելի եւ հնարաւոր կ'ըլլայ միայն Երկրորդ Ադամ՝ Քրիստոսով, որուն միջոցաւ մարդկային ցեղը խոստացեալ դրախտային կեանքը կրնայ ունենալ կամ ժառանգել:

- **Թելադրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ** [5 վայրկեան]
- **Կամաւոր նուէրներու հաւաք**
- **Կիրակնօրեայի քայլերդ**
- **Դասարանային աշխատանք**
- **Փակման/արձակման Աղօթք**

**Ճշմարիտ Մոմապահութիւն**

«... Մոմապահութիւնը, կ'ըսէ Տէրը, այն ատեն միայն իմ ուղածիս պէս կ'ըլլայ, երբ դադրիք անիրաւութիւն գործելէ, դադրիք վաճառքի մէջ խարդախութիւն ընելէ, ազատ թողո՞ւք հարստահարուածները եւ անոնց պարտքի անիրաւ մուրհակները պատուէք. երբ ձեր հացը անօթիին հետ բաժնէք. անտուն աղքատները տուն ընդունիք, զգեստ տաք անոնց որ կը տեսնէք թէ մերկ են, եւ ձեր ընտանիքն ու զաւակները չզրկէք:

This Sunday it is appropriate to speak and narrate the story of Creation and Adam's Good Life in Paradise in the Garden of Eden. Man being a rational being and having free will was called "the Prince and Crown of God's creation", and has a special role to play and duty to fulfill. He was called to assist God and fulfill God's creation leading His work toward perfection.

This Sunday recalls God creating mankind in His image and likeness, placing him in a bountiful garden paradise without sin and allowing man to share in His divinity. This Sunday of Poon Paregtan the Church recalls man's living in perfect harmony with God in the Garden of Eden.

The Hymns and Gospel readings of the day teach us about Christian prayer, fasting and sharing. They also speak about and present Christ as 'Second Adam' through whom human beings become worthy to create here on earth paradise: 'earthly spiritual kingdom', happy Christian living where God's Spirit and His laws will reign within the hearts of men and make possible to reenter through the gates of heavenly Paradise and inherit everlasting life from where, because of our disobedience, we were once expelled.

- **Announcements/recommendations/suggestions**
- **Collection**
- **Sunday School's anthem**
- **Students depart to their classes**
- **Closing Prayer**

**True Fasting**

"... The kind of fasting I want is this:  
Remove the chains of oppression  
and the yoke of injustice,  
and let the oppressed go free.  
Share your food with the hungry  
and open your homes to the homeless poor.  
Give clothes to those who have nothing to wear,  
And do not refuse to help your own relatives.

...Այն ատեն երբ աղօթէք՝  
պիտի լսեմ ձեզ.  
Հագիւ ձեր բերանը բանաք՝  
պիտի հասնիմ ձեզի:  
...Որպէս ձեր Աստուածը  
միշտ պիտի առաջնորդեմ ձեզ,  
պիտի բաւարարեմ ձեր բոլոր փափաքները  
եւ ցանկութիւնները...  
եւ դուք ջրարբի պարտէզ  
ու մշտահոս աղբիւր պիտի դառնաք»  
(Եսայի 58:3-11):

... Then when you pray,  
I will answer you.  
When you call to me,  
I will respond.  
... And I will always guide you  
and satisfy you with good things...  
And you will be like a garden  
that has plenty of water,  
Like a spring of water that never goes dry”  
(Isaiah 58:3-11).

## ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

### ԱՐԺԵՒՈՐԵՆՔ ՄԵԾ ՊԱՀՔԸ ԵՒ ԱԻԱԳ ՇԱՔԱԹԸ



Ս. Յարուլթեան Զատիկը նախորդող ութ կիրակիները կամ քառասուն օրերը կը կոչուի Մեծ Պահք: Կարժէ որ աւելի մօտէն ծանօթանանք Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանին, ինչպէս նաեւ Տէրունի Աւագ Շաբաթուան իւրաքանչիւր օրուան Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին դէպքերուն ու հանգրուաններուն, որոնց բարձրակէտ պսակումը եղաւ Քրիստոսի հրաշափառ Յարուլթիւնը:

Եկէք ծանօթանանք, Մեծ Պահոց կիրակիներու Աստուածաշնչական հիմքերուն, անդրադառնանք անոնց կրօնական, հոգեւոր իմաստին, ինչպէս նաեւ վեր առնենք անոնց թարմ այժմէականութիւնը, որոնք հոգեւոր դաստիարակութեան եւ բարեպաշտութեան գեղեցիկ առիթներ պիտի ըլլան, գղձումի, ապաշխարութեան, աղօթքի, բարեգործութեանց եւ ներքին ինքնաճանաչումի ճամբով մեզ պատրաստեն ընդունելու եւ փառաւորելու Աստուածորդի Քրիստոսի մահուան վրայ տարած Յարուլթեան Լոյսի յաղթանակը, եւ վկաները ըլլալու քրիստոնէական եկեղեցւոյ մեծագոյն տօնին:

Մեծ Պահոց կիրակիները կրօնական իմաստով հոգեւոր ճանապարհորդութիւններ են, որոնք սկիզբ կ'առնեն աշխարհի ստեղծագործութեան Աստուածաշնչական ղրուագով եւ կը յանգին Քրիստոսի աշխարհ Երկրորդ Գալստեան խոստումին:

Եկեղեցւոյ տնօրինած եւ հաստատած Ս. Գրային ամէնօրեայ ընթերցումները, ապաշխարութեան շարականներն ու աղօթքները, պահեցողութիւնը եւ ներքին ժուժկալութիւնը քաջալերող կրօնական մթնոլորտը եւ արարողութիւնները՝ կը մղեն եւ կը պատրաստեն հաւատացեալը որ աստիճանական եւ հետեւողական ընթացքով, կեանքով եւ գործերով հոգեւորապէս աւելի մօտենայ Աստուծոյ, եւ դրախտային այն կեանքին՝ ուրկէ իր անհնազանդութեան պատճառաւ արտաքսուած էր:

Եկեղեցւոյ հաստատած Մեծ Պահոց շրջանը հետեւաբար, մեզի առիթ կ'ընձեռէ (*Քրիստոսի՝ Երկրորդ Աղամի միջոցաւ*), վերստին դառնալու, մօտենալու Աստուծոյ եւ արժանանալու մեզի համար նախասահմանեալ արքայութեան դրախտային կեանքին:

## ՄԵԾ ՊԱՀՈՑ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

Բուն Բարեկենդանէն մինչեւ Ս. Զատիկ երկարող կիրակիներէն իւրաքանչիւրը կը կրէ Ս. Գրական անուն եւ յիշատակութիւն, այսպէս՝ Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատաւորի, Գալստեան, Ծաղկագարդ եւ Ս. Զատիկ:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ Կիրակին նուիրուած է Դրախտի յիշատակին, երբ նախամարդը դրախտի փափկութեան մէջ կ'ապրէր երջանիկ, եւ Աստուծոյ մշտական ներկայութիւնը եւ հաղորդութիւնը կը վայելէր:

Բուն Բարեկենդանի Ս. Գրային ընթերցումները մեզի կը յիշեցնեն թէ հնազանդութեամբ, պահեցողութեամբ, պատուիրանապահութեամբ եւ աղօթանուէր



կեանքով, դրախտէն արտաքսուածներս վերըստին կրնանք զրախտային կեանքը ժառանգել:

**ԱՐՏԱՔՍՍԱՆ ԿԻՐԱԿԻ:** Մեծ Պահոց երկրորդ



Կիրակին յիշատակն է նախածնողաց, Ադամի եւ Եւայի անհնգանդութեան պատճառաւ դրախտի երջանիկ կեանքէն անոնց արտաք-

սուելուն, որով մարդիկ ցաւատանջ դառն կեանքի եւ մահուան դատապարտուեցան:

Օրուան Ս. Գրային ընթերցումները մեզի կը յիշեցնեն, թէ երբ մենք եւս մեր նախածնողաց նման մեղանչենք եւ անհնգանդ գտնուինք Աստուծոյ եւ Իր Օրէնքներուն՝ մեր նախածնողաց նման մենք ալ պիտի տառապինք եւ «արտաքսուինք», «գրկուինք» իր ներկայութենէն ու բարիքներէն: Որպէս մարդ էակներ, շրջապատուած ենք եւ մշտապէս ներքին ու արտաքին փորձութիւններ կը դիմագրաւենք: Եթէ տկարանանք ու անտեսելով Իր պատուիրանները (անտեսելով Քրիստոսի ապաշխարութեան եւ փրկութեան հրաւէրը), դեռ եւս մեղանչենք եւ փորձենք մեր նախածնողաց նման «չբմեղանքի տերեւներու ետին պահուտիլ», այդ մեր «ինքնախաբէութիւն»ը եւ «ինքնարդարացման պատրուակ»ները միայն պատճառ պիտի ըլլան որ մենք առաւել եւս Աստուծմէ եւ իր շնորհներէն հեռանանք, մնանք առանձին եւ անօգնական:

**ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ:** Աստուծոյ ստեղծագործութեան եւ նախախնամ տնօրինութեան խորհուրդը բացայայտող Մեծ Պահոց երրորդ Կիրակիին, Աւետարանական ընթերցումները, Քրիստոսի ուսուցումներուն միջոցաւ մեզի կը փոխանցեն կեանքի ճշմարիտ մէկ այլ երեւոյթը բացատրելու իրողութիւնը՝ կորսուած Դրա-


մին, Ոչխարին բայց մանաւանդ կորսուած Անառակ Որդիին առակին ընդմէջէն պարզուող կեցրոնական ճշմարտութիւն մը՝ «կորսուածը գտած ըլլալու երջանկութիւնը»:

Հայր Աստուծոյ, նմանապէս, իր հրեշտակներուն հետ կ'ուրախանայ բոլոր այն մեղաւորներուն համար, որոնք գղջալով կ'ապաշխարեն: Անառակի Կիրակին մեզի կ'ուսուցանէ Աստուծային ներողանհուն սիրոյն մասին, որ միշտ պատրաստ է ներելու, վերստին որդեգրելու եւ վերահաստատելու «գղջալով տուն վերադարձող» բոլոր մեղաւորներուն:



**ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ:** Մեծ Պահոց չորրորդ Կիրակիին, Աւետարանական ընթերցումները մեզի կ'ու-

սուցանեն խոհեմութեամբ շահարկել ժամանակն ու մեր երկրաւոր ստացուածքները, որոնք մեզի չեն պատկանիր, այլ՝ մենք միայն Աստուծոյ կողմէ անոնց վրայ նշանակուած տնտես վերակացուներ ենք: Աստուծոյ մեզի վստահած է այս աշխարհը եւ «օր մը մեզմէ հաշիւ պիտի պահանջէ»:



Հետեւաբար, մեզմէ կ'ակնկալէ որ այնպէս՝ ինչպէս մենք հետամուտ կ'ըլլանք երկրաւոր բարիք, հանգիստ կեանք, հարստութիւն եւ երջանկութիւն ապահովելու, եւ այս մէկը իրագործելու համար յաճախ խարդախ եւ ոչ ուղիղ միջոցներու կը դիմենք. մեզի Անիրաւ Տնտեսի առակով կը յիշեցնէ եւ կը հարկադրէ նոյնքան եւ աւելի խոհեմութիւն, ճիգ, հնարք եւ աշխատանք ցուցաբերել՝ «հոգեւոր շնորհք» վաստկելու եւ արժանանալու «երկնային անսպառ գանձերը տնտեսելու» պաշտօնին: Այլ խօսքով՝ Աստուծոյ արքայութեան մէջ յաւիտենական կեանքը ժառանգելու:

**ԱՆԻՐԱԿԻ ԴԱՏԱԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ:** Մեծ Պահոց հինգերորդ Կիրակիին, Աւետարանական



ընթերցումները մեզի կը յիշեցնեն աղօթքի մէջ յարատեւելու անհրաժեշտութիւնը: Մեղքով արատաւորուած մարդկային մեր բնութիւնը սրբելու, մաքրելու եւ վերջին Դատաստանի դատապարտութենէն ազատելու եւ ար-

դարանալու, մանաւանդ շնորհքի արժանանալու համար՝ Աստուծոյ պէտք է անձանձրոյթ աղօթել, «գղջումով եւ ապաշխարութեամբ դուռը գարներ» ու բնաւ չյուսահատիլ: Ընդհակառակը՝ Աստուծոյ դատաստանին անաչառութեան ապաւինիլ, գթառատութեան եւ ողորմածութեան դիմել եւ յուսալ: Բայց մանաւանդ, քաջ պէտք է գիտնալ, թէ Աստուծոյ յուսացողը բնաւ ամօթով, անհատոյց եւ անպատասխան չի մնար:

**ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ:** Մեծ Պահոց վեցերորդ Կիրակիին, Աւետարանական ընթերցումները մեզի կը յիշեցնեն յարուցեալ մեր Փրկչին աշխարհ Երկրորդ Գալստեան եւ այդ առթիւ տեղի ունենալիք սոսկալի վերջին Դատաստանին մասին: Անկասկած որ յարուցեալ եւ երկինք համբարձեալ Քրիստոս, օր մը վերստին աշխարհ պիտի գայ որպէս Արդար Դատաւոր՝ դատելու համար ողջերն ու մեռելները եւ հատուցանելու՝ անոնց վատ կամ բարի գործերուն համաձայն:

Որպէս քրիստոնեաներ, Գալստեան Կիրակիին, մենք ակնկառոյց կը սպասենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աշխարհ Երկրորդ Գալստատին եւ վերջին Դատաստանի Օրուան: Քրիստոնեաներուս համար, Գալստեան այս Կիրակին, վերյիշեցում մըն է, միաժամանակ հաստատում թէ Քրիստոս՝ բացարձակ եւ միակ Տէրն է անցեալին, ներկային ու գալիք բոլոր ժամանակներուն:

**ԾԱՂԿԱԶԱՐԴ ԵՒ ԱԻԱԳ ՇԱԲՈՒԱՆ ՕՐԵՐԸ**

Ծաղկագարդով սկիզբ առնող Աւագ կամ Սուրբ Շաբթուան օրերը, թէեւ սահմանափակ օրերու քանակով եւ ժամանակաշրջանով, կարճ ժամանակահատուած մըն են, Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին շաբթուան եւ օրերու դէպքերուն հոյովոյթը ներկայացնող, միաժամանակ՝ քրիստոնէական եկեղեցւոյ եւ քրիստոնէութեան սուրբ օրերու մեծագոյն եւ կարեւորագոյն հոգեւոր իմաստով, շրջանը կը ներկայացնեն:

Սուրբ եւ Աւագ Շաբթուան, եկեղեցական հոգեպարար արարողութիւններու ընթացքին է որ քրիստոնեայ հաւատացեալը լրջութեամբ եւ հանդիսաւոր երկիւղածութեամբ հանդիսատես եւ ականջալուր վկան կ'ըլլայ Քրիստոսի երկրաւոր կեանքին քաւչարար եւ փրկագործական խորհուրդի արարքներուն՝ յողթական մուտքը Երուսաղէմ, Վերջին Ընթրիքը վերնատան մէջ, մատնութիւնը եւ չարչարանքները, խաչելութիւնը, թաղումը եւ վերջապէս հրաշափառ փառաւոր Յարութիւնը Միաշաբաթի արշալոյսին:

Որպէսզի կարելի ըլլայ մօտէն հետեւիլ, յաւապէս ըմբռնել եւ հասկնալ Աւագ Շաբթուան օրերուն հոգեւոր իմաստը՝ հարկ է երկիւղածութեամբ հետեւիլ եկեղեցական արարողութիւններուն եւ լրջութեամբ ունկնդրել իւրաքանչիւր օրուան ընթացքին եւ տարբեր ժամերուն տեղի ունեցած եկեղեցական ժամերգութիւններուն եւ արարողութիւններու ատեն երգուած շարականները եւ կարդացուած սուրբ գրային հատուածները:

Աւագ Շաբթուան ընթացքին երգուած շարականներն ու մեղեդիները, կարդացուած սուրբ գրային հատուածները ո՛չ միայն կը վերակենդանացնեն Աստուածորդւոյն երկրաւոր կեանքի չարչարանաց սրտաճմլիկ պատկերները եւ սրտայոյզ արարներու վերջին հանգրուանները, այլեւ կը յուսադրեն եւ կը հարստացնեն մեր հոգիները Քրիստոսի ուսուցումներով, սիրոյ վերջին պատուիրաններով, բարութեամբ եւ հնազանդութեամբ, թելադրական հրաչքներով, որոնց պսակը կը հանդիսանայ Ս. Յարութիւնը:



**ԾԱՂԿԱԶԱՐԴ:** Յիսուսի որպէս նոր արքայ, յաղթական մուտքը թագաւորներու եւ մարգարէներու քաղաքը Երուսաղէմ: Ժողովուրդը «Ովսաննա»ներով, ձիթենիի ոստերով եւ արմաւենիի ճիւղերով կ'ընդունի Յիսուսը որպէս



Թագաւոր, Ագատարար եւ Փրկիչ: Մանուկներ, ծերեր ու երիտասարդներ կը դիմաւորեն աւանակի մը վրայ նստած հեգ եւ խոնարհ հոգիներու արքան: Յիսուս որպէս յաւիտենական արքայ, յաղթական մուտք կը գործէ Երուսաղէմ սուրբ քաղաքը: Ապա խարազան առած Տաճարի շրջափակէն դուրս կը վռնտէ առեւտուրով զբաղող շահամուլ եւ Տաճարը շահարկող մարդիկը ըսելով. «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, եւ դուք աւագակներու որջի վերածած էք»:


Ծագկազարդի երեկոյեան տեղի կ'ունենայ Դոնբացէքի արարողութիւն: Դոնբացէքը կը խորհրդանշէ Յիսուսի Երկրորդ Գալուստը եւ Վերջին Դատաստանը: Վերջին Դատաստանը խորհրդանշող ծածկուած խորանի վարագոյրին առջեւ ծոնկի կու գայ աւագ եկեղեցականը եւ դուռը թակելով աղիողորմ կ'աղաչէ, որ Աստուած բանայ երկնքի դռները: Ապա վարագոյրի ետեւէն մեզի կը յիշեցուի որ արդարները միայն կրնան ներս մտնել Աստուծոյ արդարութեան դռնէն:

Բոլոր հաւատացեալներու անունով ծնկաչոք հոգեւորականը կը խոստովանի թէ անմեղ մարդ չկայ: Սակայն եւ այնպէս, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ ալ կարելի է երկնքի դռներէն ներս մտնել եւ Աստուծոյ արքայութեան արժանանալ:

Վերջին Դատաստանի յիշատակը, դատապարտութենէ աւելի ապաշխարութեան, զղջումի, վերանորոգութեան եւ փրկութեան առիթ է հայ հաւատացեալին համար:

**ԱԻԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ:** Ամբողջ Աւագ Շաբթուան առաւօտեան թէ երեկոյեան ժամերգութիւնները եւ եկեղեցական արարողութիւնները աստուածաշնչական ընթերցումներով, տաղերով եւ մեղեդիներով ճոխացուած են: Աւագ Երկուշաբթի օրուան շարականները եւ աւետարանական ընթերցումները անգամ մը եւս մեզի կը յիշեցնեն ստեղծագործութեան պատմութիւնը, մարդուն մեղանշումը, եւ Երուսաղէմի մէջ Յիսուսի մտերմիկ գրոյցը իր աշակերտներուն հետ, նաեւ անպտուղ թգենիին չորացումը: Աւագ Երկուշաբթին նախապատրաստութիւն եւ հաւատացեալին վեյիշեցում է, թէ ինք ստեղծուած է Աստուծոյ պատկերին համաձայն, եւ Յիսուսի՝ որպէս Նոր Ադամ աշխարհ գալուստով կարելի դարձաւ խորտակել մարդը Աստուծմէ բաժանող պատնէշը, առաքինութեան բարի պտուղ տալ եւ արքայութեան արժանանալ:

**ԱԻԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ:** Տասը կոյսերու առակին ընդմէջէն արթնութեան հրաւէր: Երեկոյեան ժամերգութեան ընթացքին կարդացուող բոլոր առակները վերջին դատաստանի մասին են, եւ յատկապէս Յիսուսի խօսած Տասը կոյսերու առակը, որուն մէջ տասը կոյսեր հարսանիքի կը հրաւիրուին: Անոնցմէ հինգը կը գրկուի հարսանեկան ուրախութիւններէն, որովհետեւ անհրաժեշտ պատրաստութիւնը չեն կատարեր եւ իրենց լապտերներուն ձէթը կը պակսի:



Բոլոր շարականները ու աւետարանական ընթերցումները կը խօսին վերջին Դատաստանի մասին եւ կոչ կ'ուղղեն միշտ արթուն, պատրաստ եւ իմաստուն ըլլալու, եւ կորստեան չմատնուելու:

**ԱԻԱԳ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ:** Շարականները եւ օրուան ընթերցումները կը պատմեն Քրիստոսի մեղաւոր կնոջ կողմէ անուշահոտ թանկագին իւղով օծումի դրուագը, ինչպէս նաեւ այն, որ հրեայ մեծամեծներ եւ քահանայապետներ Յուդայի հետ կը

ծրագրեն դաւել Յիսուսի դէմ:

Մեր կեանքը եւ աւետարանական այս հակադիր իրողութիւնները վերլուծելով, կարծէք եկեղեցին այսօր հարց կու տայ իր հաւատացեալներուն.

- Որպէս Աստուծոյ զաւակներ, դուք ի՞նչ կ'ընէք: Ինչպէ՞ս ձեր հաւատքը եւ հաւատարմութիւնը, սէրը կ'արտայայտէք: Նախանձի, փառքի, դրամի եւ հաճոյքի համար կ'ուրանա՞ք, կը դաւաճանէ՞ք ձեր Տիրոջ, թէ ոչ՝ հեզութեամբ, խոնարհութեամբ, սիրով եւ հաւատարմութեամբ զԱստուած կը պաշտէք, եւ ձեր շնորհներն ու բարիքները ի սպաս կը դնէք Աստուծոյ եւ մարդկութեան ծառայութեան:

**ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ:** Չորս անջատ արարողութիւններ եւ Տնօրինական դէպքեր տեղի



կ'ունենան եկեղեցոյ մէջ, որոնք կը յորդին հայ եկեղեցոյ երաժշտական սրտայոյզ, հարուստ եւ տպաւորիչ ժառանգութեամբ:

Այսպէս, ա) Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններու ընթացքին, տիրական եւ գլխաւոր մտածումը՝ Քրիստոսի սիրոյ եւ խոնարհութեան գաղափարն է որ կը շեշտուի:

բ) Կարգ Ապաշխարողաց եւ Ս. Հաղորդութեան ընթացքին՝ աղաչանքով, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ կը պատրաստուինք յիշել Վերջին Ընթրիքը, որուն ընթացքին մեր Տէրը Յիսուս Քրիստոս կը հաստատէ Ս. Հաղորդութեան Խորհուրդը: Արարողութեան երկրորդ բաժինի՝ Երեկոյեան ժամերգութեան ընթացքին տեղի կ'ունենայ Վերջին Ընթրիքի յիշատակի Ս. Պատարագը: Այս Ս. Պատարագը կը վերակենդանացնէ սրբազան այն պահը, երբ Քրիստոս աստուածային հրաշագործ ձեռքերով, հացն ու գինին օրհնեց, եւ տուաւ իր աշակերտներուն որպէս իր փրկարար մարմինն ու արիւնը, եւ թելադրեց նոյնը կատարել իր յիշատակին:

գ) Կարգ Ոտնլուայի: Մեծ ժողովրդականութիւն վայելող այս արարողութիւնը, թատերական եւ գրաւիչ ներկայացումով, կը վերակենդանացնէ Աւետարանի մէջ նկարագրուած Տէրունի այն արարքը, որով մեր Տէրը Յիսուս՝ ծունկի գալով իր աշակերտներուն ոտքերը կը լուայ, խոնարհութեան դաս մը տալով անոնց:



Արարողութեան ընթացքին կարդացուած աղօթքները իմաստալից են ու թելադրական, երգուող շարականները բանաստեղծական իրենց խորքով հարուստ եւ երաժշտութեամբ գրաւիչ են, որոնք բոլորն ալ կը պատմեն Քրիստոսի խոնարհութեան, իրարու ծառայելու եւ սիրոյ մասին:


դ) Կարգ Չարչարանաց կամ Խաւարման գիշեր անունով ծանօթ այս արարողութիւնը կը կատարենք Աւագ Հինգշաբթիի գիշերը: Շարականները, սաղմոսները, մարգարէական եւ առաքելական գիրքերու ընթերցումները եւ աւետարանական հատուածները մեզի կը պատմեն Յիսուսի մատնութիւնը, ձերբակալութիւնը, դատաստանը, չարչարանքներն ու գանակոծութիւնը, ինչպէս նաեւ Պետրոսի ուրացումը:

դ) Կարգ Չարչարանաց կամ Խաւարման գիշեր անունով ծանօթ այս արարողութիւնը կը կատարենք Աւագ Հինգշաբթիի գիշերը: Շարականները, սաղմոսները, մարգարէական եւ առաքելական գիրքերու ընթերցումները եւ աւետարանական հատուածները մեզի կը պատմեն Յիսուսի մատնութիւնը, ձերբակալութիւնը, դատաստանը, չարչարանքներն ու գանակոծութիւնը, ինչպէս նաեւ Պետրոսի ուրացումը:



«Փառք ի Բարձունս» երգի ժամանակ, եկեղեցոյ բոլոր լոյսերը կը մարին, բացի այն մոմէն որ կը խորհրդանշէ Յիսուսի ներկայութիւնը եւ առանձնութիւնը:

**ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ: ԿԱՐԳ ԽԱԶԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԱՂՄԱՆ:** Կը յիշատակուին Քրիստոսի խաչելու լուծեան եւ թաղման պարագաները: Յովսէփ Արեմաթացին Պիղատոսէն կը խնդրէ որ Յիսուսի մարմինը իրեն յանձնէ: Յովսէփ խաչէն իջեցնելով Յիսուսի մարմինը, կը պատանքէ գալն եւ կը գետեղէ ժայռի մը մէջ փորուած գերեզմանին մէջ եւ որպէս կափարիչ՝ մեծ քար մը կը գլորէ մուտքին:



Եկեղեցւոյ մէջ կը տիրէ խռովայի տիրութիւն: Արարողութիւնը կը յատկանշուի մթնոլորտի տրամուլթամբ, յուզիչ եւ ծանր շարականներու երգեցողութեամբ:

Եկեղեցւոյ մէջ, ծաղիկներով եւ վարդերով կը զարդարեն Քրիստոսի խորհրդական գերեզմանը: Եկեղեցականներ ծնկաչոք եւ յուզական կ'եղանակեն. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ թաղեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»:

**ԱՒԱԳ ՇԱԲԱԹ ԵՒ ԶՐԱԳԱԼՈՅՑ:** Առաւօտեան ժամերգութեան մթնոլորտը կը շարունակէ պահել նախորդ օրուան թախծոտութիւնը: Շարականները կրկին կը պատմեն Յովսէփ Արեմաթացիի բարութիւնը եւ Յիսուսի թաղման պարագաները:


Երեկոյեան ժամերգութիւնը սակայն, կը գգնու նոր ոգի եւ ուրախ մթնոլորտ: Նախ կը կարդացուին Հին Կտակարանի ստեղծագործութեան զրուագը Ծննդոց գիրքէն եւ մարգարէական այն հատուածները, որոնք նախագուշակութիւններ են Քրիստոսի, որպէս՝ Գառն Աստուծոյ աշխարհ գալուստին, իրմով սկիզբ առած Նոր Կեանքի եւ փրկագործ առաքելութեան:

Ապա կը հետեւի ճրագարոյցի պատարագը, ուր եկեղեցւոյ վարագոյրը բացուելով՝ յաղթականօրէն կ'աւետուի Քրիստոսի մեծահրաշ Յարութիւնը:

Եկեղեցականներ, դպիրներ եւ հաւատացեալներ մոմեր վառած յաղթական ու բարձրաձայն կը յայտարարեն. «Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն. մահով մահուան յաղթեց եւ իր յարութեամբ մեզի կեանք պարգեւեց: Յաւիտեան փա՛ռք անոր»:

**Ս. ԶԱՏԻԿ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ:** Մեծ Պահքի սուգի, տրամուլթեան եւ ապաշխարութեան օրերը հասած են իրենց աւարտին եւ քրիստոնէական մեծահանդէս կը պանծացնէ կեանքի յաղթանակը եւ մահուան պարտութիւնը:

Ս. Յարութիւնը՝ Քրիստոնէութեան եւ քրիստոնէական եկեղեցւոյ հիմնաքարը եղող մեծագոյն տօնն է: Այսօր, Քրիստոսի Յարութեամբ, եւ մահը մահով յաղթելով, պատասխան կը տրուի մարդկութեան միտքը դարեր շարունակ չարչրկած մեծագոյն մտատանջութեան եւ անլոյծ հարցումին: Արդարեւ, յարուցեալ Քրիստոսով աշխարհ կ'ազատագրուի Չարէն եւ անոր պատճառած մեղքի ապականիչ խայթոցէն եւ մահուան երկիւղէն: Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ մեր երկրաւոր կեանքին կը տրուի նոր իմաստ, ուղղութիւն եւ նպատակ: Աննպատակ չենք քալեր ու ապրիր այլեւս: Մեր հետ Քրիստոս կը քալէ, կը պայքարի եւ մեզ կ'առաջնորդէ կեանքի աղբիւր՝ Աստուծոյ: Երկրաւոր մեր կեանքը այլեւս չենք ապրիր մահուան համար, այլ՝ Քրիստոսով մահուան յաղթելու:



## SUNDAYS OF GREAT LENT

The eight weeks or forty days which precede Easter, the greatest feast of the Christian year, is called Medz Bahk or the Great Fast of Lent. During these forty days we prepare ourselves to commemorate the greatest event in the history of mankind, the victory of Christ over death. The eight weeks or forty days call us to repent, change our lives and turn to God in faith, prayer, fasting and deeds of mercy, love and instruction in the faith.

The Great Fast of Lent is a time of limiting our intake of food or eliminating certain foods. This is called *fasting* and *abstinence*. During this time, we are also called upon to give up certain pleasures. All of this is simply to remind us that the only *essential* for life is ultimately Almighty God.

The Great Fast of Lent, is a time of reconciliation. It is a time for getting things right between ourselves and our fellow human beings.


The Sundays of Lent take us through the entire history of humankind, from creation to the glorious second coming. The hymns and Scripture lessons of each day support the meaning of the *Lenten Journey*: that through prayer, repentance, fasting and Christian witness, we can draw near to God once again.

### THE SUNDAYS OF THE GREAT FAST OF LENT

Our Armenian Church takes us through the Great Fast, Sunday by Sunday, by bringing out and emphasizing a particular spiritual truth each and every Sunday. Let us now look at these, Sunday by Sunday.

The first Sunday of the Great Lent is known as the **SUNDAY OF GOOD LIVING**. The Sunday of the Good Life in Paradise in the Garden of Eden. The Gospel readings of the day, teach us about Christian prayer, fasting and sharing. Its lesson is that as God's children, we live in the gift of God's grace and love. As His sons and daughters we can be truly happy and fulfilled when we live in obedience to His will and commandments.

The second Sunday of the Great Lent is known as the **SUNDAY OF EXPULSION**. The Sunday of Exile from the Garden of Eden. The Gospel readings of the day, teach us about the law and the Christian conduct.



This Sunday reminds us that when we sin by ignoring God's will or break His commandments, we suffer, just as Adam and Eve suffered when they disobeyed Him in the Garden of Eden. All around us, there are constant temptations to put ourselves and our wishes ahead of what God wants. When we do, we sin. We separate ourselves from God, just as Adam and Eve did. Like them, we may even try to hide from God. But we only hurt ourselves when we do so. With each sin God finds us out, and we move further and further away from Him. It is we who expel ourselves from God's presence by our actions and are closed off from God's grace.

The third Sunday of the Great Lent is known as the **SUNDAY OF THE PRODIGAL SON**. The Gospel readings of the day teach and declare Jesus' concern for the lost and God's love for the repentant sinner.



The Scriptures indicate that whenever we decide to repent and return to our loving Father's love and grace, He will receive us and forgive us. If all sinners had the courage to ponder on their mistakes and wrongdoings, and repent, then they will become worthy of the Heavenly Father's compassionate mercy.

The fourth Sunday of the Great Fast is known as the **SUNDAY OF THE DISHONEST STEWARD**. The Gospel readings of the day recount Jesus' parables that teach us the *prudent* use of material goods,



especially during an imminent crisis; to those with responsibility; the uses of wealth, and the Christian attitude toward the rich and the poor. Man was appointed by God as a *steward* in this world. People should there-

fore perform the duties entrusted to them conscientiously and faithfully. In the Parable, the rich man represents God himself. We as His managers in this world sooner or later, we will have to give account of our stewardship someday.

The misuse of manager's world affairs, is praised and justified, not because they were *just* or *acceptable*, but because the manager managed *wisely* his position to gain favor after his dismissal. If the dishonest manager used wisely his temporal means, seeking happiness and security, how much harder should we work and put effort as God's managers in this world *to gain merit and eternal life*. How much harder should we work for the life that is to come, *a life that is eternal*.

The fifth Sunday of the Great Lent is known as the **SUNDAY OF THE UNRIGHTEOUS JUDGE**. The Gospel readings of the day remind us to be persistent in prayer as well as recognize our sinfulness and complete dependence on God's love and grace. Here, the great lesson which we learn is the lesson of perseverance: We must practice our Christian virtues; We must never cease to hope nor forget the coming Judgment Day.

We must never lose hope. We are admonished to remain steadfast and constant in God's grace and our total Christian life.


The Scriptures also proclaim the coming kingdom of God and of Jesus Christ, as *righteous Judge*.



The Sixth Sunday of the Great Lent is known as the **SUNDAY OF THE SECOND COMING**. The Scripture lessons of the day teach and inform us that, our resurrected Lord and Savior Jesus Christ surely will come to Judge the living and the dead. We are shown that just as everything begins with Almighty God, everything will one day end with Him. As Christians and followers of our Lord Jesus Christ, on this Sunday, we should be looking forward to the Second Coming of Christ. We are shown that He stands as the complete Lord and Sovereign of the past, the present and the future.

One day, we will all be called to give account of our life and judged accordingly. We are called to always be ready.

**THE RAISING OF LAZARUS.** The Saturday on the eve of Palm Sunday, the Church celebrates the Miracle of the Resurrection which Jesus performed on His dead friend Lazarus. This glorious act is to be understood only as the foreshadowing act of Jesus' own divine Resurrection.



## AVAK SHAPAT: THE GREAT AND HOLY WEEK

Although Holy Week is a very short period, it is the most eventful and important church period for all Christians. During this time, the church follows closely the last scenes of our Lord's Life.

Great or Holy Week is a solemn celebration of the important and final redemptive events of Christ's earthly life, especially His entry into Jerusalem, His Last Supper on Great Thursday, Crucifixion and entombment on Great Friday and His triumphant Resurrection on that first Easter morning.

In order to truly understand our Great Week celebrations, it is necessary to seriously listen to the Scripture Readings and lessons proclaimed at each liturgy. These scriptural selections not only recreate the grief, pain and suffering of the Son of God during His last week, but also enrich our spirits with His teachings/preaching and merciful miracles which are climaxed at His Resurrection.

### PALM SUNDAY:

The Sunday of Flowers and Palms. This is the day of Jesus' victorious entry into Jerusalem, and the love that the crowds showed for Him, waving palm branches and shouting "Hosanna!" This Great city of kings and prophets received Him with great joy as a new king, Savior and a deliverer. The children and old men came to meet Christ seated humbly upon a donkey.



On the evening of Palm Sunday, ceremony of the OPENING OF THE DOORS is celebrated. This service is unique to the Armenian Church, during which the priest knocks at the altar, the curtain is opened again and we, the

Church, are re-united with God. We are with Him again, as the people of Jerusalem were with Christ on the first Palm Sunday. Even though we are sinners, God still loves us enough to take us back when we repent and turn to Him.

Opening of the Gates, proclaims and celebrates our entrance to the heavenly Jerusalem after Christ's second coming and brings to mind the picture of the day of the Last Judgment. The final day of judgment is not a condemnation, but rather an occasion of confession, repentance and prayer, which are the only way to enter the *heavenly doors* of salvation.

**GREAT MONDAY:** During the first days of Holy Week, as well as throughout the week, morning and evening services are celebrated with sharagans and abundant Scriptural readings. On Monday, the scriptures help us remember the story of Creation, man's fall into sinfulness as well as the story of the barren fig tree, which Christ withered because it bore no fruit. On this day, the faithful are invited to remember the lesson that we are created in the image of God, and we are called to examine our inner selves and with clean hearts and thoughts renew our faithfulness and transform our lives and bear the fruits of virtue.

**GREAT TUESDAY:** On this day we read the story of the ten maidens, five of whom were wise enough



to put oil in their lamps while they were waiting for the bridegroom to come and take them to a wedding feast. This story, as well as the sharagans and the lessons convey the message of the last Judgment and appeal to us that we must always be ready and waiting for Christ, the Groom to come.

**GREAT WEDNESDAY:** During this day we remember two contrasting lessons; the betrayal of Jesus and the worshipful anointing of Jesus' feet to show her love and respect for Him.

Examining our lives and comparing them with the two types of contrasting acts, the church asks: "What are you doing as a child of God? Are you betraying your Lord with your greed, your desire for hedonistic pleasure and for social position? Or, do you faithfully and lovingly worship God and share your gifts for the good of all humankind?"

**GREAT THURSDAY:** On Holy Thursday we remember one

of the most important event of Christ's life. The Last Supper, at which He gave Holy Communion to His disciples, the same Holy Communion that we can share during every single BADARAK. We have BADARAK in our churches on this day, and remember the first Holy Communion shared by Christ and His disciples.



With prayers of confession asking for forgiveness, we prepare ourselves for the sacrament of Holy Repentance.

The night and morning hours of song on this day celebrate Christian love and Christ's redemptive work. We remember Christ's spoken words; "Since the light is with you, believe in the light and be children of light" (John 12:3).

The evening of Holy Thursday is also a very special time. We remember how Jesus washed the feet of His disciples in the service called *WASHING OF THE FEET*. Jesus washed His disciples' feet to show them that they must be ready to serve all men humbly.

On the same Thursday night, we have another service called *KHAVAROU*, *VIGIL OF THE NIGHT OF SUFFERING AND DARKNESS*. Here we commemorate Je-



*Jesus Washing Peter's Feet*

Jesus' betrayal, His arrest, trial, and suffering. Peter's denial and Jesus' facing death alone. Six canons of Gospel lessons are read describing Jesus being bound and tried. Twelve candles are lit and at the completion of each order of scripture readings and lessons two of the candles are extinguished. After the Bible readings, the lights of the church are all suddenly put out. A single candle is left to remind us of Christ's singular presence in the darkness. The service of Holy Thursday (Maundy), prepares us to remember the suffering and crucifixion of our Lord on Good Friday.

**GREAT GOOD FRIDAY, DAY OF CRUCIFIXION AND BURIAL.** Today we commemorate Je-

sus' crucifixion and burial. The sober liturgy of crucifixion brings us all the scriptures that foretell Jesus' death upon the cross. In the evening we tell the story of Jesus' burial. In the church, we symbolically decorate Jesus' tomb, in front of which all the clergymen kneel and sing "Soorp Asdvadz" (Holy, Mighty and Immortal God), which according to tradition, Joseph of Arimathea sang as Jesus was lowered from the cross. Joseph, because he loved Jesus, made sure that Our Lord's body was properly and decently buried.



Some churches have the custom of circling Jesus' tomb with a procession prior to the Nakhadonag. After the Nakhadonag, we sing "We kneel before Your Cross" to strengthen our faith and inspire ourselves through the mystery of the Cross.

**GREAT SATURDAY:** JURAKALOOYTZ, which means “lighting of candles”. During this service we read from the Old Testament, especially the story of the Creation of the world in the Genesis. This reminds us that, when we celebrate the Resurrection of Christ, we are celebrating the creation of the new life that Jesus gave us. Other biblical passages of deliverance are read foreshadowing God’s victory over death, evil and the darkness, at the same time preparing us to receive and celebrate Christ’s victory over death and His Resurrection.

On Easter Eve, since the feast has already begun, Divine Liturgy is celebrated. We read the story of Christ’s Resurrection in Matthew 28:1-20. It is a special aspect of Easter celebrations that homes are decorated with lighted candles.

**EASTER SUNDAY: THE FEAST OF RESURRECTION.** *“Christ is risen from the dead! He trampled down death by death, and by His resurrection He granted life to us. Glory to Him for all ages”.*

With the services of Easter Sunday, the whole mood of the church changes. We have been sad and solemn during Lent and Holy Week. Now, with the celebration of Christ’s Resurrection and the new life that He gives us, everything becomes bright and joyful. The words KRISDOS HARYAV EE MERELOTZ are happily declared again and again during the service. Everyone wants to receive Holy Communion, to share in the gift of new life. All has been changed, and death can no longer defeat us because we, as true and faithful followers of Christ, have been promised that we may share in His everlasting life.

On this day, we read the Gospel story of how the women who went to anoint Christ’s body in the tomb found out that He had risen from the grave.

At Easter, we recall and relive the most important event in human history. That event is Jesus Christ’s victory over death. This in fact is the foundation and cornerstone of Christianity and Christian faith and at the same time Christ’s Resurrection is the strongest affirmation of God’s unlimited power even over death.

Let Christ’s miraculous Resurrection be the victory of our spiritual awakening and spiritually active life.





## ՁԱՏԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձատիկի եկեղեցական արարողութիւններու եւ ծէսերու կողքին գոյութիւն ունին ժողովրդական հինաւուրց սովորութիւններ եւ ավանդութիւններ՝ որոնց սրտով եւ հաւատքով կապուած է եղած հայութիւնը քրիստոնէութեան ամենահին օրերէն ի վեր:

Օրինակ մը տանք մեր սովորութիւններէն Յարութեան այս պայծառ տօնին: Գաւառի մեր ժողովուրդը Ձատիկի նախորդ գիշերը, լուսադէմին՝ գերեզմանատուն կը շտապէր, նախ իր ննջեցեալներուն յարութեան լուրը ակետելու եւ անոնց գերեզմանին վրայ մոմ մը վառելէ ետք՝ եկեղեցի կ'երթար: Այսպէս, Ձատիկուայ Ճրագալոյցին հայոց գերեզմանատուները մոմերու լոյսերու տակ հորիզոնը լուսաւորած գեղեցիկ պատկեր մը կը ներկայացնէին: Նոյն ծէսը խոնկ ու մոմով կը կատարուէր Ձատիկի յաջորդ օրը՝ Մեռելոցի Երկուշաբթին:

Ձատիկան սովորութիւններէն է նաեւ հակիթ ներկել եւ բարեկամներու, ազգականներու ու հիւրերու նուէր տալ: Հակիթը քրիստոնէութենէ առաջ ալ գարնան, պտղաբերութեան եւ կեանքի խորհրդանիշ նկատուած էր ու մեր նախնիք, ամէն գարնանամուտին իրարու կարմիր ներկուած կամ գունազարդ նաշխուն հակիթներ կը նուիրէին: Հեթանոս հայեր կը հաւատային թէ հակիթը տիեզերքը կը ներկայացնէր եւ իր մէջ խորհրդաւոր ուժ կը պարունակէր:

Քրիստոնէութեամբ, բայց մանաւանդ Քրիստոսի մահուան վրայ տարած յաղթանակով՝ կարմիր ներկուած հակիթը «մեղաց քառութեան» համար Քրիստոսի խաչին վրայ թափած արեան եւ նոր կեանքի խորհրդանիշի վերածուեցաւ: Նոր կեանք եւ պտղաբերութիւն խորհրդանշող հակիթը՝ Քրիստոնեաներ հակիթը կը ներկեն, օրհնել կու տան, ապա կ'ուտեն եւ որպէս նուէր ալ իրենց բարեկամներուն կու տան: Անոր կեղեւը ժայռափոր գերեզմանը կը խորհրդանշէ, ճերմկուցը՝ Քրիստոսի մահուան սպիտակ պատանքը, որով խաչելութենէն ետք պատանքուեցաւ, իսկ դեղ-

նուցը՝ յարութիւնը եւ կեանքը, որով Քրիստոս խորտակելով դժոխքի եւ մահուան դռները, շարականագիրի բառերով՝ «խորտակեաց վէմս գղուունս գերեզմանի», գերեզմանին ժայռը մէկդի հրելով՝ աստուածապէս յարութիւն առաւ:

## ARMENIAN EASTER FOLK TRADITIONS

A rich tradition of Easter folk customs has existed side by side with Armenian Easter Church services since the earliest days of Armenian Christianity. An example of these is the custom of Armenian villager does not go directly to church, but goes first to the cemetery to visit his dearly departed ones. There, on the head-stone, he lights a candle, kneels and whispers, "Christ is Risen" to the grave. Thus, on Easter Eve the Armenian cemetery ablaze with candle-lights.

The most prominent custom associated with Easter is to color eggs and present them to friends and guests as an expression of esteem and love. Egg in ancient time was the symbol of spring and fertility. Ancient Armenians believed that the egg had magical powers and that it was a symbol of the universe. An ancient tradition of the first day of Spring involved everyone exchanging decorated or red-dyed eggs.

In Christianity the red color of the egg symbolizes the blood shed by Christ.

The Easter egg is now the symbol of the rocky grave, from where Christ was resurrected.

With Christianity and Christ's victory over death, it became the symbol of new life.